

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

ՔՈՒՆԱՐԿԵՆՔ՝ ՀԱՅ ԱԶԳԻ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿ ՔՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆԻՆ

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Երեքշաբթի 1 Փետրուար 2011-ին, խմբագրատունն այցելեց Փաստիմայի Բաղադարարանի խորհուրդի ընտրութիւններու քեկնածու՝ Քրիս Շահինեան, որ ընդառաջելով մեր հրաւերին, կու գար ունենալու հարցազրոյց մը, գոր լոյս կ'ընծայենք մեր ներկայ համարով: Օգտուելով իր ներկայութեան, ուզեցիմք կարգ մը տեղեկութիւններ Բաղադարարանի խորհուրդի ընտրութիւններու մասին: Նաեւ, անշուշտ, ուզեցիմք լսել զինք իր յետագայ ծրագիրներուն կապակցութեամբ:

Փաստիմայի Բաղադարարանը ընտրութիւնները տեղի պիտի ունենան 3 Մարտ 2011-ին, ոչ աւելի քան երկու շաբաթէն:

Այս Բաղադարարանը կ'ապրի աւելի քան 20,000 (Բասա Կազար) հայ, որ իրրեւ կարգապահ, աշխատասէր, շինարար, արհեստավարժ եւ կառուցողական համայնք՝ բազմաթիւ այլ համայնքներու շարքին, իր գործունէութեամբ կը բերէ շրջանէն ներս, գործնապէս օժանդակելով Փաստիմայի Բաղադարարանին:

Հակառակ իր ունեցած քուսակներուն եւ ներկայացուցած կարեւորութեան, իրրեւ պատկանելի, առաջադէմ եւ օգտակար համայնք, շրջանի հայութիւնը, նախորդող տարիներուն չկարողացաւ իր արժանիքն ունենալ Բաղադարարանէն ներս, որովհետեւ ան չկրցաւ կազմել համախորհուրդ, միասնական եւ կազմակերպուած ազգային կեանք եւ ընտրական ծրագիր: Հայ համայնքի ձայները բաժնուեցան հայ թեկնածուներու միջեւ, ինչ որ ծառայեց մէկը միւսը չեզոքացնելու անհիմաստ պայքարի: Այս կացութեան օգտուողները եղան ո՛չ հայ թեկնածուները:

Նոյնը պատահեցաւ հայահոծ Բաղադարարանի Կրեմլի Բաղադարարանի ընտրութիւններուն, թուականէս երկու տարի առաջ: Կարելի չեղաւ մէկ թեկնածուի շուրջ համաձայնի ու այդպէս իջնել ընտրութիւններուն: Համայնքին ձայները ցրուեցան, կեղծաւարտութիւն փոխարէն մէկ թեկնածուի վրայ, պատճառ դառնալով ո՛չ մէկուն եւ ո՛չ միւսին յաջողութեան: Օգտուողը եղաւ ո՛չ հայը:

Այդ է պատճառը, համաձայն Քրիս Շահինեանին, որ հայ համայնքը գրկուած կը մնայ Բաղադարարանի կողմէ յատկացուած այնպիսի բարիքներէ, որոնք մեծապէս օգտակար կը լինեն հանդիսանալ Փաստիմայի հայ հա-

Շաբ.ք էջ 18

ՄԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԵՒ ՀԻԼԸՐԻ ՔԼԻՆԹՆ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՅ-ԹՐԲԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ



Հիլըրի Քլինթոն եւ Սերժ Սարգսեան Միւնիխի մէջ տեղի ունեցած հանդիպումի ընթացքին

Անվտանգութեան քաղաքականութեան հարցերով Միւնիխի մէջ տեղի ունեցած համաժողովի ծիրէն ներս, Հայաստանի գործող նախագահ Սերժ Սարգսեանի փետրուար 5-ին հանդիպումն ունեցած է Ամերիկայի Միացեալ Նահանգներու պետական քարտուղար Հիլըրի Քլինթոնի հետ:

Սարգսեան կարեւոր նկատած է Միացեալ Նահանգներու գործունէութեան արդարութիւնը Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման, ինչպէս նաեւ տարածաշրջանէն ներս խաղաղութեան եւ ապահովութեան պահպանման գործին մէջ: Սերժ Սարգսեան շնորհակալութիւն յայտնած է Միացեալ Նահանգներու պետական քարտուղարին՝ ԵԱՀԿ Ասիանայի համաժողովի ժամանակ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման վերաբերեալ ցուցաբերած յստակ եւ հաւասարակշռուած դիրքորոշման համար:

Հիլըրի Քլինթոն ըսած է, որ

ուրախութեամբ կը չիշէ իր հայաստանեան այցը եւ շնորհակալութիւն յայտնած՝ ջերմ ընդունելութեան համար:

Անդրադառնալով Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններուն, պետական քարտուղարը շեշտած է Միացեալ Նահանգներու հաստատակամութիւնը՝ աջակցելու երկու երկրներուն միջեւ բնականոն յարաբերութիւններ հաստատելու գործընթացը շարունակելու հարցով:

Նախագահը եւ ԱՄՆ պետական քարտուղարը քննարկած են հայ-ամերիկեան երկկողմ յարաբերութիւններու հետագայ զարգացման, տնտեսական կապերու ընդլայնման ուղղուած կարգ մը խնդիրներ: Զրուցակիցները անդրադարձած են նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման ներկայ փուլին, ինչպէս նաեւ Հայաստանի մէջ իրականացուող բարեփոխումներու ընթացքին վերաբերող հարցերուն:

«ՈՒՒՔԻԼԻՔՍ» ԿԸ ՀԱՍՏԱՏԵ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՐԴԱՆ ԱՅՎԱԶԵԱՆ ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆ ՏՈՒՐ ԿԱՇԱՌՔ ՊԱՀԱՆՁԱԾ Է

Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութեան դիւանագիտական փաստաթուղթերը գաղտնագրածող «Ուիքիլիքս» կայքէջը նոր բացայայտում մը կատարած է, որ կու գայ հաստատելու Հայաստանի բնապահպանութեան նախկին նախարար Վարդան Այվազեանի կողմէ կաշառք պահանջելու դէպքը, որ օրին մեծ աղմուկ յառաջացուցած էր:

Նոր հրապարակուած փաստաթուղթին մէջ, Ամերիկացի դիւանագետ Էնթոնի Կոտֆրի կը նկարագրէ այն դժուարութիւնները, որոնց հանդիպած է ոսկրի արտադրութեամբ զբաղող «Global Gold Corporation» (GGC) ընկե-

րութիւնը, Հայաստանի մէջ իր գործունէութեան ընթացքին: Գաղտնագրած փաստաթուղթի համաձայն, 2005-ին ՀՀ բնապահպանութեան նախարար Վարդան Այվազեան GGC-ի իրաւաբան Աշոտ Պօղոսեանէն պահանջած է իր մօտ ընկերոջ եւ պատգամաւոր Մուրատ Կուլոբեանին երեք միլիոն տոլար կաշառք տալ:

ՀՀ Բնապահպանութեան Նախարարութիւնը 2004-ին GGC-ին տրամադրած էր Հանքաւանի եւ Մարճանի հանքերու շահագործման նոր արտօնագիր, որուն ժամկէտը համապատասխանաբար կը

Շաբ.ք էջ 5

ԱՆԳԱՐԱ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՈԳԵԿՈՉԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՅԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ

Թրքական «Սապահ» թերթի մէջ լոյս տեսած գրութիւն մը կը տեղեկացնէ, որ պաշտօնական Անգարան, որ այս տարի առաջին անգամ ըլլալով Թուրքիոյ մէջ ոգեկոչեց Հոլոքոսթի զոհերու յիշատակը, կը պատրաստուի նմանատիպ քայլեր իրականացնել նաեւ Ապրիլ 24-ին՝ Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակի հերթական տարելիցի օրը:

«Անգարան ունի այն տեսակէտը, որ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ ստորագրուած Արձանագրութիւններու առկախման հիմնական պատճառներէն է հոգեբանական արգելքը, սակայն միեւնոյն ժամանակ կը գիտակցի, որ այդ Արձանագրութիւնները վաղ թէ ուշ կեանքի պիտի կոչուին: Հասկնալով, որ անցեալի իրադարձութիւններուն հետ առնչուող հոգեխեղումը հեշտութեամբ յաղթահարելը հնարաւոր չէ, Անգարա ձեռնարկած է որոշ քայլեր, որոնց իրականացումը կը նպաստէ հոգեբանական պատնէշներու յաղ-

Շաբ.ք էջ 5

ՍԴՀԿ-Ի ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՍՓԻՒՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՒՇ ՅԱԿՈՒԲԵԱՆԻ ՀԵՏ

Ինչպէս ծանօթ է մեր ընթերցողներուն, շրջանէ մը ի վեր Լոս Անճելըս կը գտնուէր Հայաստանի սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեան: Ան իր հանդիպումներու ծիրէն ներս տեսակցութիւն մը ունեցաւ Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան Արևմտեան Ամերիկայի Վարիչ Մարմնի հետ:

Վերոյիշեալ հանդիպումը տեղի ունեցաւ անցեալ Զորքաբեր Փետրուար 2, 2011, կէսօր ետք ժամը 6:00-ին, Հայաստանի Հանրապետութեան Լոս Անճելըսի հիւպատոսարանէն ներս, Կլենտէյլ:

Հնչակեան պատուիրակութիւնը կը գլխաւորէր շրջանի ատենապետ՝ ընկ. Վազգէն Խոտանեան: Հանդիպման ներկայ էին նաեւ աւագ հիւպատոս՝ Տիար Գրիգոր Յովհաննէսեան եւ փոխ հիւպատոս՝ Պրն. Մեսրոպ Շապուրեան: Խօսակցութեանց գլխաւոր առանցքը Հայրենիք-Սփիւռք փոխադարձ յարաբերութիւններու զարգացումն էր: Տիկին Հ. Յակոբեան մասնաւորաբար անդրադարձաւ հայրենի Խորհրդարանի առընթեր սփիւռքահայերու մասնակցութեամբ ներկայացուցչական «պալատ» մը ստեղծելու, ինչպէս նաեւ զարկ տալ ուսուցիչներու վերապատրաստումին եւ երիտասարդական ճամբարներու աշխուժացման գործին:

ՔՈՉԱՐԵԱՆԻ ՇԱՐՈՒՄ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

ՅԱԿՈՐԲԱՂԱԼԵԱՆ

Ռոբերտ Գոչարեանի «Մեղ-իամաքսին» տուած հարցազրույցը թողնում է բաւական հակասական տպաւորութիւն: Քոչարեանը մի կողմից ներկայացնում է, որ 2003 եւ 2007 թուականների ընտրութիւնները տեղի են ունեցել իր անմիջական եւ լիակատար վերահսկողութեան ներքոյ, որ անուն առ անուն ինքն է տուել ՀՀԿ նախընտրական ցուցակի հաւանութիւնը, միւս կողմից այդ ամէնը համարում է անցած գնացած փուլ եւ ներկայի մասին ընդամէնը ասում, որ «հրամայական է թուում զալիք խորհրդարանական ընտրութիւններին արդար քաղաքական մրցակցութեան անհրաժեշտութիւնը»:

Շատ աւելի ցանկալի կը լինէր իհարկէ, որ Ռոբերտ Գոչարեանը վերջապէս որոշակիացներ, թէ այդ «քաղաքական մրցակցութեան» մէջ ինքն ինչ դերում է պատկերացնում իրեն՝ մասնակցի, դիտորդի, թէ էլ չի «մրցավարի», ինչպէս բնորոշում է իր նախագահութեան ժամանակաշրջանը: Միզուցե Գոչարեանն այդ մասին լուծում է, անգամ ոչինչ չի ակնարկում այն պատճառով, որ ինքն էլ չի պատկերացնում իր դերն այդ մրցակցութիւնում: Եթէ նա մասնակցի է ուզում լինել, ապա որն է լինելու իր մասնակցութեան ձեւաչափը՝ նա կուսակցութիւն է ստեղծելու, թէ արդեն գործող որեւէ կուսակցութիւն է գլխաւորելու: Այդ առումով պարբերաբար շրջանառուում է Դաշնակցութեան կամ Բարգաւաճ Հայաստանի տարբերակը:

Բայց այդտեղ կայ բաւական լուրջ խնդիր, որովհետեւ այդ կուսակցութիւնները միզուցե ցանկութիւն կ'ունենան աջակցուել Գոչարեանի կողմից, օգտուել նրա տնօրինած ռեսուրսներից թէ՛ նիւթական, թէ՛ իշխանական համակարգում եղած կադրային բազայի առումով, բայց հազիւ թէ ցանկութիւն յայտնեն, որ Գոչարեանը հրապարակաւ ստանձնի իրենց առաջնորդութիւնը: Գոնէ առայժմ այդ կուսակցութիւնների համար դա կարող է անցանկալի լինել, քանի որ Գոչարեանը չունի թէ՛ հասարակական աջակցութիւն Հայաստանի ներսում, թէ՛ աջակցութիւն միջազգային քաղաքական կենտրոնների առումով:

Մասնակցութեան առումով Գոչարեանն ակնյայտօրէն ունի ձեւաչափի խնդիր: Ստուերային մասնակցութիւնն էլ թերեւս ռիսկային է հենց իր՝ Գոչարեանի համար, քանի որ նրա ռեսուրսներից օգտուող քաղաքական ուժերը կարող են դրանք պարզապէս օգտագործել Սերժ Սարգսեանի հետ անհատական պայմանաւորութեան համար, Գոչարեանին այդպիսով թողնելով հենց ստուերում: Դե ժուրէ լծակների բացակայութիւնը նրան զգալիօրէն խոչընդոտում է դե ֆակտո արդիւնաւէտ ստուերային գործունէութիւն ծաւալել: Հենց այդ պատճառով է թերեւս, որ Ռոբերտ Գոչարեանը պարբերաբար կարիք է գտնում այդպիսի հարցազրույցների տեսքով թարմացնել համակարգի աւելի ու աւելի խամրող յիշողութիւնը:

«Մասալուծեք բանավէճի բնույթը ցոյց տուեց, որ որոշ քաղաքական գործիչների յիշողութիւնը, ցաւոք, չափազանց կարճ է», ասում է Ռո-

բերտ Գոչարեանը, խօսելով Գազիկ Մառուկեանի այն յայտարարութեան մասին, թէ Գոչարեանն ուզած ժամանակ կը գլխաւորէր ՀՀԿ-ն:

Եթէ զալիք «քաղաքական մրցակցութեանը» Ռոբերտ Գոչարեանը պատրաստուում է լինել դիտորդ, ապա այդ դէպքում հարց է, թէ ինչ արժէք է ներկայացնելու նրա այդ կարգավիճակը: Օրինակ, 1999-ի վերջին եւ 2000-ի սկզբին Գոչարեանը լինելով դե ժուրէ նախագահ, յայտարարում էր, որ իրադարձութիւններին հետեւում է «դիտորդի կարգավիճակով»: Այդ ժամանակ նա այդ կարգավիճակն օգտագործեց առաւելագոյնս արդիւնաւէտ կերպով: Սակայն, թերեւս դրա պատճառն այն էր, որ գործող անձինք բաւական ապաշնորհ էին: Այժմ էլ, Գոչարեանի դիտորդութիւնը կարող է աշխատել, արժէքաւոր մարտավարութիւն լինել միայն այն դէպքում, եթէ գործող անձինք, եւ մասնաւորապէս՝ ընդդիմութիւնն ու Սերժ Սարգսեանը լինեն ապաշնորհ: Թէ-եւ պէտք է բացառել նաեւ տարբերակ, երբ դիտորդ Գոչարեանը կարող է օգտակար լինել կամ ընդդիմութեանը, կամ Սերժ Սարգսեանին: Բոլոր դէպքերում, դիտորդի կարգավիճակը Գոչարեանի համար առաւելապէս վիճակալիալ է յիշեցնում, ընդ որում այնպիսին, որ դու կը շահես այն դէպքում, եթէ չշահեն միւսները:

«Մրցավարութեան» տարբերակը Ռոբերտ Գոչարեանի համար թերեւս ամենամասնաւոր տարբերակն է: Մրցավար լինելու համար նա պէտք է բացառապէս յայտարարի իրավիճակի տէր լինելու մասին: Բայց Գոչարեանը չի կարող այդ մասին յայտարարել, քանի որ նա իրավիճակի տէրը չէ: Գուցէ Սերժ Սարգսեանն էլ չէ, բայց ինքն էլ չէ հաստատ: Իսկ այդ դէպքում «մրցավարութեան» հեռանկարը դառնում է չափազանց մշուշոտ:

Ըստ երեւոյթին, Ռոբերտ Գոչարեանի գլխաւոր խնդիրն այժմ այն է, որ նա փորձում է իրավիճակն իր ձեռքը վերցնել, պահել, կամ իրեն իրավիճակում պահել աշխատանքի այն մեթոդաբանութեամբ, որը կիրառում էր նախագահի պաշտօնում: Սակայն իրավիճակն այժմ շատ է փոխուել, ընդ որում ոչ միայն այն իմաստով, որ ինքն այլեւս նախագահ չէ: Իրավիճակը փոխուել է աւելի լայն համատեքստով. հասարակութիւն, քաղաքական դաշտ, իշխանական համակարգ, տարածաշրջանային եւ աշխարհաքաղաքական գործընթացներ: Իսկ այդ ամէնի պարագայում, Գոչարեանի աւանդական մարտավարութիւնը ոչ միայն այժմ կիրառելի չէ եւ ժամանակավրէպ է, այլ նոյնիսկ այդպիսին էր լինելու անգամ եթէ նա լինէր նախագահի պաշտօնում:

Ըստ երեւոյթին, Գոչարեանի համար միակ օպտիմալ, իրատեսական եւ արդիւնաւէտ տարբերակը կարող է լինել հրապարակային քաղաքականութեան, ոչ թէ պալատական ինտրիգի սկզբունքով կառուցուած գործունէութիւն սկսելը: Եթէ նա պատրաստ է դրան եւ ունակ, ապա կարող է մի քանի տարի անց ակնկալել արդիւնաւէտ հեռանկարներ: Իսկ եթէ ոչ, ապա թերեւս որսորդութիւնն է առաւելագոյնը, որից նա կարող է կոնկրետ արդիւնք ակնկալել:

ԲԱՐԻԿԱԴՆԵՐԻՑ ԱՅՆ ԿՈՂՄ

ՆԱԻՐԱ ՀԱՅՐՈՒՄԵԱՆ

Մեծ Բրիտանիայի վարչապետ Դեւիդ Կեմերոնը գտնում է, որ պէտք է մէկընդմիջտ հրաժարուել բազմամշակութայնութեան ձախողուած քաղաքականութիւնից եւ աւելի ազդեալ պաշտպանել արեւմտեան լիբերալ արժէքները: Միւնիխի 47-րդ անվտանգութեան համաժողովի ժամանակ Կեմերոնն իր ելույթից զոքոք ընկերներին առաջարկել է «կոշտացնել վարուող քաղաքականութիւնը այն խմբերի նկատմամբ, որոնք իսլամական ծայրայեղականութիւն են քարոզում»:

«Ոստքի ազատութիւն, դաւանանքի ազատութիւն, ժողովրդավարութիւն, օրէնքի գերակայութիւն, հաւասար իրաւունքներ բոլորի համար՝ անկախ սեռից, ռաս-

իսլամական ծայրայեղականութեան հռչակումը որպէս քաղաքակիրթ աշխարհից սպառնալիք, կը փոխի մաւր Յայաստանի իրավիճակը

սայական պատկանելութիւնից կամ սեռական կողմնորոշումից», ասել է Կեմերոնը Միւնիխում:

Արեւմուտքում իսլամական ծայրայեղականութեան սպառնալիքի մասին վաղուց արդէն խօսուում է եւ որոշակի քայլեր են ձեռնարկուում: Սակայն արեւմտեան պետութիւններում բարձրաձայնելը, որ հանդուրժողականութիւնն իրեն չի արդարացնել, վերջերս են սկսել՝ երեւի այն պատճառով, որ ազդեալ ներգաղթեալների կշիռը հասել է կրիտիկական կէտի:

Բաժանող գծերն աշխարհում յաճախ չեն փոխուում: Որպէս օրէնք, դրանք փոխուում են կախուած այն բանից՝ որտեղից է գալիս վտանգը: Գլոբալ վտանգ է համարուում ոչ միայն ֆիզիկական, այլեւ էթնիկ, կրօնական, դասային, մշակութային էքսպանսիան: Մինչեւ վերջերս համաշխարհային կապիտալը փորձում էր դիմակայել սոցիալ-կոմունիստական էքսպանսիային: Կոմունիզմի ուրուականի հետ պայքարելու համար էթնիկ եւ դաւանաբանական կազմով տարբեր պետութիւններ, ինչպէս օրինակ Թուրքիան, յայտնուել էին ՆԱՏՕ-ի կազմում: Այժմ իրավիճակը փոխուել է. Հաստեանցել է նոր էքսպանսիայի վտանգը:

Եւրոպական երկրների առաջնորդները իսլամական էքստրեմիզմը յայտարարել են որպէս սպառնալիք քաղաքակիրթ հանրութեանը, որոնք ապրում են ժողովրդավարութեան օրէնքներով: Եւ համապատասխան այդ սպառնալիքի էլ գործելու են անվտանգութեան միջազգային համակարգերը: Բաժանարար գծերն անցնելու են այն պետութիւնների միջեւ, որոնք պատերազմ են յայտարարում իսլամական ծայրայեղականութեանը եւ որոնք արդարացնում ու զինում են ծայրայեղականներին:

Բաժանարար գիծն ընդհատուում է Ռուսաստանում եւ Չինաստանում, որոնք ոչ մի կերպ չեն կարողանում կողմնորոշուել արեւմտեան ժողովրդավարական արժէքների հանդէպ իրենց վերաբերմունքի հարցում: Չնայած որ Չինաստանի նախագահ Հու Չին-տան ԱՄՆ-ում խոստովանել է, որ իր պետութիւնում մարդու իրաւունքների հարցով խնդիրներ կան, սակայն իրենք աշխատելու են այդ ուղղութեամբ, Չինաստանն

այնուամենայնիւ գերադասում է չմտնել քաղաքակրթական վէճերի մէջ՝ իրականացնելով ժողովրդագրական եւ տնտեսական էքսպանսիա, թէեւ Չինաստանում էլ աւտուալ է իսլամական սպառնալիքը:

Ռուսաստանի հարցում ամէն ինչ աւելի բարդ է: Այն ոչ մի կերպ չի ցանկանում դուրս գալ կապիտալիզմի դէմ պայքարի ռեժիմից եւ շարունակում է ՆԱՏՕ-ն ընդունել որպէս հակառակորդ: Մոսկուան ստիպուած կը լինի փոխել վերաբերմունքը ՆԱՏՕ-ի հանդէպ, եթէ ընդունում է, որ իսլամական ծայրայեղականութիւնն իր համար սպառնալիք է: Սակայն դրա հետեւանքով կարող է ջրիւ գալ պոստիւնեան իշխանութիւնը, որը կառուցուում է Արեւմուտքին դիմադրաւելու սկզբունքի վրայ:

Իսլամական ծայրայեղական-

նութեան հռչակումը որպէս քաղաքակիրթ աշխարհին սպառնալիք, կը փոխի նաեւ Հայաստանի իրավիճակը: Հայաստանը կարող է յայտնուել բարիկաղի այս կողմում՝ արեւմտեան հասարակայնութեան կողմում, քանի որ արդէն երկար ժամանակ է, որ դիմադրաւում է իսլամական ծայրայեղականութեանը: Սակայն այդ անցումը մեխանիկորէն տեղի չի ունենայ: Կեմերոնը յստակ չափանիշներ է յայտարարել՝ խօսքի, դաւանանքի ազատութիւն, օրէնքի առջեւ հաւասարութիւն: Եթէ Հայաստանը չհամապատասխանի այս չափանիշներին, կարող է յայտնուել բարիկաղի այն կողմում:

«ԼՐԱԳԻՐ»

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Ա.բ.մ.տեքն Ա.մ.բ.ի.կայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆԵԱՆ
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
 ՎԱՐՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ
 ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԱՆ
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ

ՎԱՐՁԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, Canada \$60 (Second Class), \$75.00 (Air Mail)
 Overseas \$85.00 (2nd Class Mail), \$125.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
 at Pasadena CA.
 Please Send Address Change To
MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍՏԱՆ

ՀՈՎԻԿ ԱՐՐԱՅԱՍԵԱՆԸ «Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՅԱՆՁԻՆ

Ազգային ժողովի նախագահ Հովիկ Արրայասեանը Երկուշաբթի, Փետրուար 7-ին յայտարարել է, որ եթէ կուսակցութիւնը (ՀՀԿ) որոշի, որ ինքը պէտք է հրաժարական տայ, «կ'ենթարկուի կուսակցութեան պահանջին»՝ շտապելով յաւելել, որ «նման պահանջ դեռեւս չկայ»:



ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Արրայասեան

«Կարելորդ՝ Սերժ Սարգսեանի մասով բացառում ենք: Ազգային ժողովի նախագահի մասով՝ հնարաւոր է: Որովհետեւ Սերժ Սարգսեանին փոխարինող դեռ չկայ, ես չեմ տեսնում», - լրագրողներին ասել է Արրայասեանը՝ յաւելելով, որ երկրի նախագահի հետ տարաձայնութիւններ չունի, չի էլ ունեցել:

Դիտարկմանը, թէ տեւական ժամանակ է չի կրում ՀՀԿ-ի շքանշանը, Արրայասեանը արձագանքեց. - «Ես հոգով եմ ՀՀԿ-ական, ոչ թէ նշանով»:

Անդրադառնալով սպասուող խորհրդարանական ընտրութիւններին՝ Ազգային ժողովի նախագահը ասաց, թէ միակ ուշալուծը, որ կարող է մեծամասնութիւն կազմել ապագայ խորհրդարանում, ՀՀԿ-ն է: Իսկ նախագահական ընտրութիւններում յաղթելու «չանսերը Սերժ Սարգսեանինն են»:

Հովիկ Արրայասեանը մի քանի անգամ ընդգծեց իր քաղաքա-

կան կողմնորոշումը ՀՀԿ-ին հաւատարիմ մնալու մասով, նաեւ՝ Սերժ Սարգսեանին հաւատարիմ մնալու իր պատրաստակամութիւնը՝ թերեւս ցանկանալով հերքել վերջերս մամուլում շրջանառուող լուրերը, թէ չի բացառում, որ խորհրդարանի խօսակերպի Հանրապետականն ու 2013-ին մասնակցի նախագահական ընտրութիւններին՝ իբրեւ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան թեկնածու:

Հովիկ Արրայասեանը հնարաւոր չհամարեց մինչեւ յաջորդ խորհրդարանի ընտրութիւնները երկպալատ խորհրդարանի ստեղծումը:

ՀՀԿ-Ի ՑՈՒՑԱԿԸ ԱՆՈՒՆ ԱՌ ԱՆՈՒՆ

ՀԱՍԱԶԱՅՆԵՑՈՒԵԼ Է ՌՈՒԲԵՐԴ ՔՈՉԱՐԵԱՆԻ ՀԵՏ

Ռոբերդ Քոչարեանը Մեդիամաքս գործակալութեանը տուած հարցազրոյցում, պատասխանելով հետեւեալ հարցին, թէ «Անցած երկու շաբաթներին ընթացքում քաղաքական դաշտում քննարկուող ամենաարդիական թեման ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկեանի յայտարարութիւնն է այն մասին, թէ ժամանակին, երբ ՀՀ նախագահն էիք, դուք, ցանկութեան դէպքում, կարող էիք կամ սեփական կուսակցութիւն ստեղծել, կամ էլ գլխաւորել գործողներից մէկը, մասնաւորապէս՝ ՀՀԿ-ն, սակայն չկամեցաք: Կարո՞ղ էք բացատրել այդ շրջանի Ձեր գործողութիւնների տրամաբանութիւնը»:

վար լինել: «2003 եւ 2007 թուականներին ինձ հետ անուն առ անուն համաձայնեցուցել է ՀՀԿ նախընտրական ցուցակը: Եւ դա նախագահի եւ խորհրդարանում ամենամեծ խմբակցութիւնն ունեցող կուսակցութեան միջեւ համագործակցութեան բարձր մակարդակի ցուցանիշ էր: Դա բաց եւ ամբողջ հասարակութեան կողմից ընկալելի փոխգործակցութիւն էր, այլ ոչ թէ ինչ-որ գաղտնի պայմանաւորութիւն: Այն թոյլ էր տալիս ինձ ղեկավարել երկիրը՝ չմտածելով կուսակցական առաջնորդութեան մասին: Ի դէպ, այդ համագործակցութիւնը դարձաւ երկրի՝ այն տարիներին արձանագրուած սոցիալ-տնտեսական զարգացման լուրջ յաջողութեան գրաւականը, եւ խօսում է այդ գործընթացի բոլոր մասնակիցների պրագմատիզմի մասին:

«Կարծում եմ, քչերն էին այն ժամանակ կասկածում, որ ես որպէս նախագահ ունակ եմ ոչ միայն ձեւաւորել, այլեւ գլխաւորել (ֆորմալ եւ ոչ ֆորմալ ձեւով) խորհրդարանական մեծամասնութիւնը: Պարզապէս, ես ընտրել եմ խորհրդարանի եւ կուսակցութիւնների հետ փոխգործակցութեան այլ մոդել, որն այն ժամանակ առաւել արդիւնաւէտ էր եւ հնարաւորութիւն էր տալիս նախագահին ամբողջովին կենտրոնանալ պետական գործունէութեան վրայ եւ միաժամանակ մասնաւոր լայն դաշտ պահպանել ներքաղաքական գործերում,- ըսած է Հայաստանի նախկին բռնապետը:

ԻՇԽՈՂ ԿՈՒԼԻՑԻԱՅԻ ՆԵՐՍՈՒՄ ՆՈՐ ՅՈՒՇԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ Է ԴՐՈՒԵԼ ՇՐՋԱՆԱՌՈՒԹԵԱՆ ՄԵՋ

Հայաստանի կառավարող կուսիցիայի ներսում շրջանառութեան մէջ է դրուել համագործակցութեան նոր յուշագրի նախագիծ: NEWS.am-ի աղբիւրների փոխանց-

մամբ, այդ փաստաթղթով նախանշուած են այն շրջանակները, որոնց շուրջ կառավարող կուսիցիան պետք է համագործակցի 2012-ին կայանալիք խորհրդարանական

ԴԱՏԱՐԱՆԸ ԲԱԲԱՐԱՐԵՑ 3 ՊԱՏԳԱՍԻՈՐՆԵՐԻ ՀԱՅՅՆ ԸՆԴԴԵՄ «ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»-Ի

Երկուշաբթի, Փետրուար 7-ին Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրաւասութեան դատարանը մասամբ բաւարարեց Ազգային ժողովի պատգամաւորներ Սամուէլ Ալեքսանեանի, Լեւոն Սարգսեանի եւ Ռուբէն Հայրապետեանի կողմից իրենց պատուին, արժանապատուութեանը եւ գործարար համբաւին պատճառուած վնասի հատուցման պահանջով «Հայկական ժամանակ» օրաթերթի դէմ յարուցուած հայցը:

Դատարանը որոշեց, որ թերթի 2010-ի Հոկտեմբերի 14-ի համարում լոյս տեսած «Ռեթից եօթը ցուցակում են» վերնագրով յօդուածում հրապարակուած տեղեկութիւնները չեն համապատասխանում իրականութեանը:

Յօդուածում ասուած էր, թէ Ռուսաստանի իրաւապահները կազմել եւ Մոսկուայում գործող «Միաբանութիւն» ակումբի նախագահ Սմբատ Կարախանեանի հետ քննարկել են իրենց քննած քրէական գործերում շրջանառուող հայաստանեան պաշտօնեաների ու պատգամաւորների մի ցուցակ, որում նշուած են եղել նաեւ վերոյիշեալ երեք պատգամաւորների անունները: Պատգամաւորները պահանջում էին հերքել հրապարակումը:

Դատարանը պարտաւորեցրեց «Հայկական ժամանակ»-ին՝ դատավճիռը ուժի մէջ մտնելուց չեւտոյ մէկ շաբաթեայ ժամկէտում հերքում սպագրել:

Որպէս իրենց պատուին ու արժանապատուութեանը հասցուած վնասի փոխհատուցում Սամուէլ Ալեքսանեանը, Լեւոն Սարգսեանը եւ Ռուբէն Հայրապետեանը,

ովքեր նաեւ յայտնի գործարարներ են, թերթից պահանջում էին իրենցից իւրաքանչիւրին վճարել 2-ական միլիոն դրամ: Նրանք նաեւ 500-հազարական դրամ են պահանջում դատական ծախսերի փոխհատուցման համար:

Սա վերջին մէկ տարուայ ընթացքում «Հայկական ժամանակ»-ի դէմ երկրորդ դատական հայցն է: Անցած տարի «պատիւը եւ արժանապատուութիւնը արատաւորող տեղեկութիւնների հերքման եւ վնասի հատուցման» պահանջով դատարան էր դիմել Ռոբերդ Քոչարեանի որդին՝ իրեն հասցուած վնասը գնահատելով 16 միլիոն դրամից աւելի: Դատարանը հայցադիմումը բաւարարել էր մասամբ, եւ «Հայկական ժամանակ»-ը ստիպուած եղաւ վճարել մօտ 3.5 միլիոն դրամ:

«Ինչպէս նախկին բոլոր դատական գործերը մեր թերթի դէմ, ինչպէս միւս բոլոր խոչընդոտները մեր աշխատանքներին, ես համարում եմ մէկ կենտրոնից ղեկավարուող գործողութիւնների շղթայի մի մասը, որոնք միտուած են ճնշել «Հայկական ժամանակ»-ը եւ վնասել թերթի գլխաւոր խմբագիր, քաղաքատարկեալ, «Արթիկ» քրէակատարողական հիմնարկում ներկայումս մենախցում պահուող Նիկոլ Փաշինեանին», - նախքան դատարանի վճռի հրապարակումը «Ազատութիւն» ռադիոկայանին տուած հարցազրոյցում յայտարարել էր թերթի հրատարակիչ «Դարեակից» ՍՊԸ-ի տնօրէն Աննա Յակոբեանը՝ մասնաւորեցնելով, որ «մէկ կենտրոն» ասելով նկատի ունէր «Հայաստանի բարձրագոյն ղեկավարութեանը»:

ԴԱՏԱԽԱՉՈՒԹԻՒՆՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ Է «ՀԵՏՔ»-Ի ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆԻ ՀԱՅՐՈՅԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի գլխաւոր դատախազութիւնը ստացել է «Հետք» էլեկտրոնային կայքի հաղորդումը՝ յանցագործութեան մասին եւ դրան կից ներկայացուած հեռախօսազրոյցի ձայնագրութիւնը, որում Աժ ՀՀԿ-ական պատգամաւոր Ռուբէն Հայրապետեանը հայցուցում է կայքի լրագրողին: Այս մասին NEWS.am-ի թղթակցին տեղեկացրեց ՀՀ գլխաւոր դատախազութեան հանրային կայքերի վարչութեան պետ Շահէն Տոնոյեանը: Նա նշեց, որ նամակին դատախազութիւնը կը պատասխանի օրէնքով սահմանուած ժամկէտում:



ՀՀԿ-ական պատգամաւոր Ռուբէն Հայրապետեան

«Ձայնագրութիւնն այժմ ստուգման ընթացքում է եւ դատախազութիւն ներկայացուած դիմումների եւ հաղորդումների վերաբերեալ՝ «Քրէական դատավարութեան օրէնսգրքով» սահմանուած ժամկէտում կը պատասխանենք», - նշեց Տոնոյեանը:

Յիշեցնենք, որ Ռուբէն Հայրապետեանը հայցուցել էր լրագրո-

ղին, երբ նա զանգահարել եւ փորձել էր տեղեկութիւն ճշդել իրենցից, ինչից յետոյ լրատուամիջոցը յանցագործութեան մասին հաղորդում էր ներկայացրել դատախազութեանը: Ըստ «Հետք» կայքի գլխաւոր խմբագիր էդիկ Բաղդասարեանի, պատգամաւորն ակնյայտօրէն խոչընդոտել է լրագրողի մասնագիտական օրինական գործունէութիւնը:

Եւ 2013-ին կայանալիք նախագահական ընտրութիւնների ժամանակ: Նշենք, որ Հայաստանի կառավարող կուսիցիայի մէջ ընդգրկուած են երեք կուսակցութիւններ՝ Հայաստանի Հանրապետական, «Բարգաւաճ Հայաստան» եւ «Օրինաց երկիր» կուսակցութիւնները: Բանն այն է, որ ՀՀԿ-ն եւ ՕԵԿ-

ը վաղուց յայտարարել են, թէ նախագահական ընտրութիւններին աջակցելու են գործող նախագահ Սերժ Սարգսեանին, իսկ ԲՀԿ-ն առաջիկայի բարձրաձայնել իր դիրքորոշումը: Հենց դա էլ վերջին շրջանում ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի միջեւ լուրջ լարուածութեան առիթ է դարձել:

ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐԲԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ ՅԱՅ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԵՆ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ

Յունիսին կայանալիք խորհրդարանական ընտրություններին ընդառաջ թուրքական կուսակցությունները պատգամաւորութեան թեկնածու են առաջադրում նաեւ հայկական համայնքի երեւելի ներկայացուցիչներին:

Hurriyet Daily News պարբերականի փոխանցմամբ, վերջին 50 տարիների ընթացքում առաջին անգամ հնարաւորութիւն է ստեղծուել, որ հայ համայնքը ներկայացուած լինի թուրքական խորհրդարանում:

«Նախկինում հայերը, որպէս կանոն, խուսանաւում եւ չէին մասնակցում թուրքիայի ներքին քաղաքականութեանը՝ համատեղ անցեալի ցաւոտ իրադարձութիւնների պատճառով», - Hurriyet Daily News-ին ասել է առաջադրուած թեկնածուներից մէկը՝ Արեւ Ջէբէշին:

Նրա խօսքով, տասնամեակներ շարունակ գործող այս աւանդույթը փոխուել է «Ակօս» թերթի հայ խմբագրապետ Հրանդ Դինքի սպանութիւնից յետոյ:

«Դա շրջադարձային պահ դարձաւ մեզ համար. ճիշդ է, հայերի մի մասը առաւել զաղտնապահ դարձաւ մտավախութեամբ, որ այս երկրում կարող ես սպանուել խօսքերիդ համար, սակայն շատ աւելի մեծ էր այն հայերի թիւը, որոնք սկսեցին խօսել եւ պաշտպանել իրենց իրաւունքները», - ասել է Ջէբէշին՝ ով առաջադրուել է թուրքիայի հիմնական ընդդիմադիր կուսակցութիւններից մէկի՝ Ժողովրդահանրապետականի կողմից:

«Ես հայ եմ, եւ եթէ ընտրուեմ, անշուշտ, վեր կը հանեմ իմ համայնքի խնդիրները, սակայն ես նաեւ այս հասարակութեան մասն եմ, եւ ուզում եմ ներկայացնել ողջ երկիրը: Իմ թեկնածութիւնը իւրօրինակ մարտահրաւէր է, ես ուզում եմ, որ մարդիկ հաւատարիմ մնան իրենց խոստումներին», - ասել է հայազգի թեկնածուն:

Ընդհանուր առմամբ, Hurriyet Daily News-ի տեղեկութիւններով, առաջիկայ ընտրութիւններին Ստամբուլի հայկական համայնքից 7 թեկնածու է մասնակցելու: Նրանցից 6-ին առաջադրել են տարբեր քաղաքական ուժեր, մէկը փորձում է խորհրդարան անցնել որպէս անկախ թեկնածու:

«Յաղթանակի հասնելու դէպքում նրանք կը դառնան թուրքական խորհրդարան անցած առաջին հայերը՝ 1960-ականներից ի վեր», - Hurriyet Daily News-ին ասել է ազգային փոքրամասնութիւնների հարցերով փորձագէտ Այհան Ակթարը:

«Մեր համայնքը, ցաւօք, անգամ տեղեակ չէ իր իրաւունքներից, որոնք տրուել են Լօզանի պայմանագրով: Հայերը տարիներ շարունակ վախեցել են ինչ-որ բան փոխել ստեղծուած իրավիճակում՝ նոր խնդիրներ առաջ չբերելու մտավախութեամբ, սակայն, ես չեմ կարծում, որ դա ճիշդ քաղաքականութիւն է», - ասել է Արեւ Ջէբէշին ու յաւելել, որ այժմ թուրքիան ձգտում է դառնալ Եւրամիութեան անդամ, եւ հայկական համայնքը կարող է օգտագործել այդ հանգամանքը՝ իր բողոքներն ու դժգոհութիւնները արտայայտելու եւ դրանց լուծումը գտնելու համար:

«Մեր համայնքը, ցաւօք, անգամ տեղեակ չէ իր իրաւունքներից, որոնք տրուել են Լօզանի պայմանագրով: Հայերը տարիներ շարունակ վախեցել են ինչ-որ բան փոխել ստեղծուած իրավիճակում՝ նոր խնդիրներ առաջ չբերելու մտավախութեամբ, սակայն, ես չեմ կարծում, որ դա ճիշդ քաղաքականութիւն է», - ասել է Արեւ Ջէբէշին ու յաւելել, որ այժմ թուրքիան ձգտում է դառնալ Եւրամիութեան անդամ, եւ հայկական համայնքը կարող է օգտագործել այդ հանգամանքը՝ իր բողոքներն ու դժգոհութիւնները արտայայտելու եւ դրանց լուծումը գտնելու համար:

«ՄԱՐԴԻԿ ԿԸ ՎԱԽՆԱՆ, ՈՐ ԿՐՆԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ ԱՆՑԵԱԼԻ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ», - ԿԸ ՅԱՅՏՆԵ ՏԵՐՍԻՄԱՅԱՅ ԳՈՐԾԻՉԸ

Հայաստանի մէջ է թուրքիոյ գործող Տերսիմի հայերու դաւանանքի եւ փոխօգնութեան միութեան հիմնադիր Միհրան Փրկիչ Կիւլթեքինը: Լրագրողներու հետ հանդիպման ժամանակ ան պատմեց տերսիմահայերու պատմութիւնը, որոնք թրքական եաթաղանէն փրկուելու համար միաւորուած են ալեւիներու հետ ու ապաստանած Տերսիմ կոչուող բարձրադիր վայրին մէջ:



Միհրան Փրկիչ Կիւլթեքին

«Տերսիմը երեք կողմերէն շրջապատուած է լեռներով, եւ այդ բարձունքներուն վրայ կառուցուած վանքերուն մէջ պահուած են հայերուն ունեցած հարստութիւնները: Օսմանները փորձած են ներխուժել Տերսիմ ու կոտորել հայերը, բայց ալեւիները երբեք չեն խախտած իրենց խոստումը ու չեն մատնած հայերը», - ըսաւ Միհրան Փրկիչ Կիւլթեքին:

Բանախօսին խօսքերով՝ ասիկայ հարիւրամեայ խնդիր է, ու պէտք է պատմութիւնը լաւ իմանալ՝ տերսիմահայերուն հասկնալու համար:

Միհրան Փրկիչ Կիւլթեքինը առաջին անգամն է, որ այցի կու գայ Հայաստան: Այցին նպատակն է՝ իրենց կազմակերպութեան ծրագրերը ծանօթացնել Հայաստանի հայութեան, անոնց նպատակն է Տերսիմի հայերու հայկականութեան եւ ինքնութեան վերականգնումը,

մշակութային հարստութեան ու հայոց լեզուին տէր կանգնելը:

Բանախօսը դժուարացաւ նշել, թէ քանի հայ կայ Տերսիմի մէջ, սակայն նշեց, որ գիւղերուն 75 տոկոսը հայաբնակ են:

«Երբ կը խօսինք մարդոց հետ, կը խոստովանին, որ հայ են, սակայն կը վախնան ինծի պէս դատարան դիմել, վերականգնել ազգութիւնն ու կրօնափոխ ըլլալը», - ըսաւ բանախօսը:

Միհրան Փրկիչ Կիւլթեքինը այս հանգամանքը կը բացատրէ վախի զգացումի առկայութեամբ:

«Այսօրուան իշխանութիւններէն վտանգ չկայ, բայց մարդիկ կը վախնան, որ կրնան վերադառնալ անցեալի իշխանութիւնները, ու պատմութիւնը կրնայ կրկնուիլ», - ըսաւ բանախօսը:

ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ՅԱՅ ՅԱՄԱՅՆՔԻ ԴԵՍ ԼԱՐՈՒԱԾՈՒԹԻՒՆ ՉԿԱՅ

Կահիրէի Ամերիկեան Համալսարանի դասախօս Անժելա Յարութիւնեանը, ով գրեթէ ամէն օր թահրիր հրապարակում մասնակցում է բողոքի ակցիաներին, փաստում է, որ հայ համայնքի դէմ լարուածութիւն չկայ, որովհետեւ նախ՝ հայերը չեն մասնակցում քաղաքական իրադարձութիւններին, եւ երկրորդ՝ եգիպտացիները նրանց չեն համարում օտարերկրացիներ, որովհետեւ դարեր շարունակ ապրում են նրանց հետ կողք-կողքի:

Պաշտօնական տուեալներով եգիպտոսում 8 հազարանոց հայկական համայնք կայ, հայերը սոցիալապէս ապահովուած խաւին են

պատկանում եւ ապրում են արուարձաններում՝ Կահիրէի կենտրոնից 7-15 կիլոմետր հեռու:

Անժելա Յարութիւնեանի փոխանցմամբ, այդ արուարձաններից մէկը՝ Մաադի կոչուող թաղամասը, որտեղ մեծ է հայերի թիւը, այս օրերին գտնուում է երկրի գինուած ուժերի հսկողութեան տակ՝ «քանի որ այդտեղ շատ օտարերկրացիներ կան, միջին եւ բարձր խաւի ներկայացուցիչների թաղամաս է»:

«Թաղամասը ամբողջութեամբ շրջապատուած է տանկերով եւ ամէն օր ստուգումներ են լինում, այնպէս որ, չեմ կարծում, որ հայերին առանձնակի վտանգ է սպառնում», - նշեց Յարութիւնեանը:

ՏԻՆՔԻ ՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԻՆ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՅԵՏԱՔՆՆՈՒԻ ՍԹԱՄՊՈՒԼԻ ՆԱԽԿԻՆ ՈՍՏԻԿԱՆԱՊԵՏԸ



Թրքական դատախազութիւնը որոշում կայացուցած է «Ակօս» շաբաթաթերթի խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութեան գործին առնչութեամբ հետաքննութիւն սկսել 30 քաղաքական գործիչներու նկատմամբ, որոնց շարքին է նաեւ Սթամպուլի նախկին ոստիկանապետ ձեւալետտին ձերահը:

Թրքական լրատուամիջոցներու փոխանցումով, վերոյիշեալ անձինք յառաջիկային պիտի կանչուին դատախազութիւն՝ Տինքի սպանութեան գործին առնչութեամբ ցուցմունքներ տալու համար:

Յիշեցնենք, որ օրեր առաջ թուրքիոյ նախագահ Ապտուլլահ Կիւլը, նախագահին կից գործող Պետական վերահսկիչ պալատին հրահանգած էր ուսումնասիրել «Ակօս» շաբաթաթերթի խմբագրապետ Հրանդ Տինքի սպանութեան գործը:

Թուրքիոյ Պետական վերահսկիչ պալատը չի կատարեր դատարանի գործառույթը եւ կը քննէ

միայն յոյժ կարեւոր գործերը: Որոշուած է նաեւ Տինքը սպաննած Օկիւն Սամասթիի գործի դատական առաջին նիստի ամսաթիւը. Սամասթին դատարանին առջեւ պիտի կանգնի Փետրուար 28-ին:

Յիշեցնենք, որ ամիսներ առաջ Սթամպուլի դատարանը, բաւարարելով Օկիւն Սամասթիի փաստաբան Լեւենթ Երլալըրմի պահանջը, որոշում կայացուցած էր Սամասթին դատել իբրեւ անհափազասի: Այս պարագային Սամասթին կը սպասուի շատ աւելի մեղմ պատիժ: անոր նկատմամբ սահմանուելիք որեւէ պատժաչափ պիտի նուազեցուի հինգ տարիով:

Նշենք նաեւ, որ ներկայ պահու Սթամպուլի դատարանին մէջ կը շարունակուի Տինքի սպանութեան գործի հերթական՝ 16րդ դատական նիստը: Իսկ դատարանի շէնքին դիմաց՝ բողոքի ցոյց կ'«իրականացնէ «Հրանդ Տինքի ընկերներ» կոչուող խումբը:

ԿԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՇՈՔԻ ՇԱՄԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA ԵՆՈԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՍԻՍ ԱՄԵՆԱՎԱՍԱԿԵԼԻ ԱՂԲԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

«ԵԿԵՂԵՑԻՆ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՆԱԱՒՏՈՐԻՏԱՐ ԿԱՌՈՅՑՆ Է»

Ինչպէս Հայաստանի բոլոր պետական կառույցները, այնպէս էլ եկեղեցին, ստուերային կառույց է եւ չի գործում թափանցիկութեան սկզբունքով: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում ասաց «Համագործակցութիւն Յանուն Ժողովրդավարութեան» կենտրոնի նախագահ, Religions.am կայքի խմբագիր Ստեփան Դանիէլեանը՝ անդրադառնալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ներքին խոհանոցի մասին մամուլի վերջին հրապարակումներին: Նա նշեց, որ թափանցիկութիւն պէտք է լինի եկեղեցուն վերաբերող ցանկացած հարցում՝ կաթողիկոսի ընտրութեան մեխանիզմներ, ընտրութեան կարգ, ֆինանսաւորում եւ այլն, քանի որ եկեղեցին եւս համաժողովրդական կառույց է:

«Եթէ չկայ հաշուետուութիւն, չկայ թափանցիկութիւն, լինում են մարդիկ, ովքեր ուզում են այն իրենց վերահսկողութեան տակ առնել: Այդ առումով, եկեղեցին Հայաստանում ամենաաւտորիտար կառույցն է: Կայ կաթողիկոս, որը չի վերահսկում ոչ ոքի կողմից», - յայտարարեց Դանիէլեանը՝ առաջարկելով անձերից դուրս գալ եւ խնդիրը քննարկել որպէս երեւոյթ:

«Համագործակցութիւն Յանուն Ժողովրդավարութեան» կենտրոնի նախագահը նշեց, որ ոչ թափանցիկ եւ ոչ հաշուետու գործունէութիւնը եկեղեցուն բնորոշ է եղել բոլոր ժամանակներում՝ եւ միջնադարում, եւ ներկայումս: «Այն կառույցը, որը գործում է վերահսկողութիւնից դուրս, բնականաբար դրանում առաջանում են կոռուպցիոն ուսիկներ եւ ապօրինութիւններ», - նշեց Դանիէլեանը: Նա նաեւ յաւելեց, որ եկեղեցու առողջութեան համար պէտք է յստակեցնել երկու հարց՝ կաթողիկոսի ընտրութիւնների մեխանիզմների ձեւաւորումը, ինչպէս նաեւ եկեղեցու ֆինանսների թափանցիկութիւնը: «Չգիտես ինչու, այդ հարցերին եկեղեցին շատ նիարդային է արձագանքում, եւ դա բնական է, քանի որ ոչ ոք չի ցանկանում իր ներքին խոհանոցը բացել բոլորի առաջ», - նշեց NEWS.am-ի զրուցակիցը:

Նրա խօսքով՝ եկեղեցուն վերաբերող ցանկացած բացասական անդրադարձ հանդիպում է կոշտ դիմադրութեան որոշ լրատուամի-

ջոցների կողմից, եւ այնպիսի տպաւորութիւն է, որ եկեղեցին անձեռնմխելի կառույց է եւ դրան չպէտք է մատով դիպչել: Մինչդեռ, ըստ Դանիէլեանի, եթէ որեւէ կառույց խոցելի տեղեր ունի, ապա դրանք պէտք է վերացնել, այլ ոչ թէ յանցաւոր լուծութիւն պահպանել:

Նշենք, որ ըստ մամուլի հրապարակման, Ֆրանսիայի տարբեր քաղաքներում գտնուող Հայ առաքելական եկեղեցիների հոգաբարձուների խորհրդի անդամները վերջերս բաց նամակով դիմել են Ֆրանսիայի թեմի առաջնորդ Նորվան արքեպիսկոպոս Զաքարեանին: Նամակում եկեղեցու ղեկավար մարմին հանդիսացող խորհրդի անդամները յայտնում են, որ Էջմիածնի կողմից փորձ է արւում փոխել մինչ այժմ գործող կարգը եւ տեղական համայնքի խորհուրդների կողմից եկեղեցիները ղեկավարելու փոխարէն դրանք կառավարել Էջմիածնի ու կաթողիկոսի կողմից: Ֆրանսահայերի երկրորդ մտահոգութիւնն այն է, որ Սուրբ Էջմիածինն ուզում է ձեռք գցել Սփիւռքի եկեղեցիների ֆինանսներին ու ինքը տնօրինել դրանք, մինչդեռ Ֆրանսիայում եկեղեցու ֆինանսները տնօրինում են եկեղեցու հոգաբարձուների խորհրդի որոշումներով:

Մայր աթոռ Սուրբ Էջմիածինը հերքել է այս տեղեկատուութիւնը, նշելով, որ այդ հրապարակման մէջ տեղ գտած մտահոգութիւններն անհիմն են եւ չեն համապատասխանում իրականութեանը:

Մայր աթոռ Սուրբ Էջմիածինն անդրադարձել է մամուլի հրապարակմանը, ըստ որի Ֆրանսիայի հայ համայնքը դժգոհ է Էջմիածնից: Մայր Աթոռի տեղեկատուական համակարգից NEWS.am-ին յայտնում են, թէ այդ հրապարակման մէջ տեղ գտած մտահոգութիւններն անհիմն են եւ չեն համապատասխանում իրականութեանը:

«2009 թ. Նոյեմբերին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարուած թեմական-ներկայացուցչական ժողովում թեմերից ժամանած առաջնորդները եւ աշխարհական պատուիրակները հաստատեցին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու բոլոր թեմերի



համար տիպային կանոնադրութիւն, որտեղ յատակեցուցին թեմական-եկեղեցական կանոնադրութիւնների հիմնական սկզբունքները:

Այդ թուականից ի վեր բոլոր թեմերում աշխատանք է տարւում, որպէսզի միօրինակութեան բերուեն թեմական եւ ծխական կանոնադրութիւնների հիմնական սկզբունքները: Ֆրանսիայի Հայոց թեմի պարագային եւս վերատեսութեան է ենթարկուելու թեմական կանոնադրութիւնը, որպէսզի եկեղեցու սկզբունքներին հակասող կանոնադրական յօդուածները փոխարինուեն թեմական-ներկայացուցչական ժողովի կողմից որդեգրած՝ Եկեղեցու ասանդութեանն ու կանոններին համահունչ յօդուած-

ներով: Յերիւրանք է նաեւ այն, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ցանկանում է «ձեռք գցել Սփիւռքի եկեղեցիների ֆինանսներին եւ ինքը տնօրինել դրանք»: Վերոյիշեալ թեմական տիպային կանոնադրութեան համաձայն, որը հաստատուած է Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից, թեմական եւ ծխական կալուածքները համարւում են համայնքի սեփականութիւն:

Վստահ ենք, որ Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդի եւ պատկան կառույցների աշխատանքի արդիւնքում կը փարատուեն Ֆրանսիայի մեր հայ համայնքում տեղ գտած թիւրքմբռնումներն ու մտահոգութիւնները», - ասուած է հարցազրույցի ժամանակ:

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ ԿԱՐԴԱՆ ԱՅՎԱԶԵԱՆ ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆ ՏՈՒԱՐ ԿԱՇԱՌՔ ՊԱՅԱՆՁԱԾ Է

Շարունակուած էջ 1-էն

լրանար 2005 եւ 2007 թուականներուն: Այդ իսկ պատճառով, ընկերութիւնը 2005 Յունիսին դիմում ներկայացուցած էր բնապահպանութեան նախարարութիւն՝ Հանքաւանի մէջ հետախուզական աշխատանքներ իրականացնելու նպատակով յատուկ արտօնագիր ստանալու համար: Նախարարութիւնը սակայն, ձգձգած էր արտօնագրի տրամադրումը, իսկ 2005-ին Այվազեան GGC-ի իրաւաբան Աշոտ Պօղոսեանէն պահանջած էր Մուրատ Կուլոյեանին երեք միլիոն տոլար կաշառք տալ, պատճառաբանելով, թէ այդ անհրաժեշտ է 2003-ին կնքուած առքուվաճառքի մասին գործարքը աւարտին հասցնելու համար:

Այվազեան նաեւ տեղեկացուցած էր, որ այդ գումարը չտրամադրուելու պարագային, նախարարութիւնը ընկերութիւնը պիտի զրկէ այդ երկու հանքերու արտօնագրերէն եւ զայն պիտի տրամադրէ այլ ընկերութիւններու եւ խոչընդոտներ ստեղծէ՝ ընկերութեան գործունէութեան համար:

Փաստաթուղթին մէջ նաեւ կը նշուի, թէ Բնապահպանութեան Նախարարութիւնը փորձած է հանքի շահագործման արտօնագիրը տրամադրել նոր ձեւաւորուած Golden Ore LLC-ին, որ, ինչպէս վստահեցուցած է GGC-ն, կը պատկանի նոյնինքն բնապահպանութեան նախարարին: Փորձ կատարուած է նաեւ Մարձանի հանքավայ-

րի շահագործման արտօնագիրը վաճառել աճուրդի միջոցով, անտեսելով այն փաստը, որ այդ հանքավայրի առնչութեամբ հայց ներկայացուած է միջազգային դատարան: Աճուրդը, հաւանաբար ամերիկեան կողմի միջամտութենէն ետք, կանխուած է՝ անորոշ ժամկէտով:

Ընկերութիւնը այդ խնդիրներու մասին յայտնած է Հայաստանի մէջ ԱՄՆ դեսպանին, իսկ ամերիկեան կողմը ստիպուած եղած է շարք մը քայլեր ձեռնարկել՝ ընկերութիւնը պաշտպանելու համար: Ամերիկեան կողմը այդ հարցը բարձրացուցած է հայկական կողմին հետ տարբեր մակարդակներու վրայ հանդիպումներու ժամանակ:

Պօղոսեան ամերիկեան կողմին նաեւ յայտնած է, թէ ինքը տուեալներ ունի, որ նոյնիսկ ՀՀ գլխաւոր դատախազը հրահանգ ստացած է «GGC-ի նկատմամբ որեւէ մեղադրանք գտնել»: Քննարկուած է նաեւ Պօղոսեանի ոչնչացման հարցը:

Իսկ 2006 Դեկտեմբերին, ընկերութիւնը դիմած է Միջազգային իրաւարարական դատարան՝ այդ վէճերը հարթելու համար:

Փաստաթուղթի աւարտին կ'ըսուի, որ ամերիկեան կողմը պաշտպանած է ընկերութեան այդ որոշումը՝ միաժամանակ յայտնելով, որ ամէն ինչ պիտի ընէ, այդ փաստերը համակողմանիօրէն եւ ամբողջական կերպով հետաքննելու համար:

ԱՆԳԱՐԱ ԿԸ ՊԱՏՐԱՍՏՈՒԻ ՈԳԵԿՈՉԵԼ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՄԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՅԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ

Շարունակուած էջ 1-էն

թահարման», - կը գրէ թրքական թերթը:

«Անգարան պաշտօնեայ ուղարկեց մասնակցելու Յունուար 27-ին Հոլոքոսթի գոհերու յիշատակի ոգեկոչման օրուան առնչութեամբ կազմակերպուած ոգեկոչման: Եւ ճիշդ այդպէս՝ Անգարան հրահանգած է գործօն մասնակցութիւն ունենալ Ապրիլ 24-ին հայերու կողմէն կազմակերպուելիք ոգեկոչումներուն», - կը գրէ «Սապահ» տեղեկացնելով, որ թեման քննարկուած է թուրքիոյ Ազգային Անվտանգութեան Խորհուրդի (ԱԱԽ) նիստին:

«ԱԱԽ-ի նիստին որոշում կայացաւ, այդ նպատակով շփումներ հաստատել հայկական Սփիւռքի, յատկապէս ամերիկաբնակ հայերու

հետ, ինչպէս նաեւ մասնակցիլ Սփիւռքի ներկայացուցիչներուն կողմէն այդ օրերուն կազմակերպուելիք «ոգեկոչումներուն», - կը գրէ թերթը, աւելցնելով, թէ հայ ժողովուրդին հասնելու համար պէտք է երկխօսութիւն ծաւալել Սփիւռքի հետ:

«Անգարա հաստատակամ է այս հարցին մէջ եւ հաւատարիմ պիտի մնայ ե՛ւ այդ ուղղութեամբ իրականացուող քայլերուն, ե՛ւ Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ ստորագրուած Արձանագրութիւններուն: Նաեւ, թրքական իշխանութիւնները առկախած են քաղաքական պոչքոթի գործընթացը՝ ուղղուած բոլոր այն պետութիւններուն դէմ, որոնց խորհրդարաններուն մէջ ընդունուած են Հայոց Ցեղասպանութեան փաստը ճանչցող բանաձեւեր», - կը գրէ «Սապահ»:

ՍՓԻՌՔԻ ՅՈՒՐ ԶԷ՝ ՔԱՆԻ ՊԱՆՍ Է ԲԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ

«Առաջին Լրատուականի» գրուցակիցն է Հնչակեան կուսակցության կեդրոնական վարչության անդամ, Լիբանանի խորհրդարանի նախկին պատգամաւոր Եղիկ ձեռնեանը:



- 33 սփիւռքի նախարար Յրանուշ Յակոբեանը Գալիֆորնիայի հայ համայնքի հետ հանդիպման ժամանակ յայտարարել է, որ հնարաւոր է Յայաստանի խորհրդարանը դառնայ երկպալատ, եւ վերին պալատի պատգամաւորներ կարող են լինել սփիւռքի ներկայացուցիչները: Սերժ Սարգսեանի աշխատակազմից եւս չի երբեցից այդ մտադրութիւնը: Պարոն Գերեջեան, ինչպէ՛ս էր գնահատում այս գաղափարը:

- Երկաստիճան խորհրդարան ունենալ հնարաւոր է, եթէ դա Հայաստանի ժողովրդի պահանջն է: Սա Հայաստանի Սահմանադրութեանը վերագրուող հարց է, ժողովրդի եւ քաղաքական բոլոր ուժերի խնդիրը, սա ուղղակի ներքին քաղաքական հարց է, բայց երբ դա քննարկուած է հայրենիք-սփիւռք ծիրի մէջ, արդէն դառնում է ուրիշ նշանակութեան հարց, ոչ թէ Հայաստանի ներքին օրէնսդրական դաշտը կարգաւորող հարց: Հայրենիք-սփիւռք յարաբերութիւնները մի քանի փուլեր անցան, եւ սա այդ փուլերից մէկն է: Իհարկէ, ասում են, թէ այս գաղափարը դեռեւս կատարեալ չէ, մշակուած չէ եւ դրա գործնական կիրառումը մշակուած չէ ու դառնալու է հայրենիք-սփիւռք հերթական վէճի, քաշքշուկի նիւթը:

- Իսկ Յայաստանի նման երկրին պէ՛տք է երկպալատ խորհրդարան ունենալ:

- Դա պիտի որոշեն Հայաստանի ժողովուրդն ու այստեղ գործող քաղաքական ուժերը, իսկ սփիւռք-հայրենիք յարաբերութիւնների մէջ, ես չեմ կարծում, որ սա պիտի լինի կենսական այն խնդիրը, որի շուրջ մենք պէտք է վիճենք իրար հետ: Մինչեւ հիմա եղած տարբեր հարցեր են դրուել սփիւռքի եւ հայրենիքի միջեւ: Օրինակ՝ երբ մենք վիճում էինք մեսրոպեան եւ բոլշեւիկեան ուղղափառութեան մասին, նոյն հարցի տարբեր տեսակետները կային թէ՛ Հայաստանում, թէ՛ սփիւռքում, իսկ վերջին հարցը Հայաստան-Թուրքիա արձանագրութիւնների մասին էր, եւ այդ ժամանակ թէ՛ Հայաստանում, թէ՛ սփիւռքում եղան մարդիկ, ովքեր տարբեր եւ հակասական կարծիքներ էին արտայայտում: Երկպալատ խորհրդարանի ստեղ-

ծումը եւս պէտք է դառնայ մի կուռախնձոր սփիւռքի եւ Հայաստանի միջեւ: Վերին պալատը՝ ծերակոյտը, պիտի լինի այնպիսի մի մարմին, որտեղ քննարկուելու են աւելի սկզբունքային, ռազմավարական հարցեր եւ հենց այստեղ սփիւռքահայութիւնը իր ներկայացուցիչները պիտի ունենայ: Ինչպէ՛ս պիտի ունենայ, երբ Սահմանադրութիւնը արգելում է սփիւռքահային ընտրելու եւ ընտրուելու իրաւունքը: Նոյնիսկ եթէ սփիւռքահայը Հայաստանի քաղաքացիութիւն ունենայ, ապա չի կարող ընտրել եւ ընտրուել, տասը տարի չի բնակուել այստեղ: Սա սահմանադրական մեծ խախտում է, եւ եթէ օրէնսդրական ձեւով մտածեն, պէտք է Սահմանադրութիւնը բարեփոխեն, սփիւռքահայերին հենց Սահմանադրութեամբ ընտրուելու եւ ընտրելու իրաւունք պէտք է տրուի: Սակայն եթէ այդ ամէնն էլ կատարուեց, ո՞վ պիտի ընտրի սփիւռքահային, որովհետեւ սփիւռքահայ հասկացութիւնը աշխարհացրիւ հասկացութիւն է: Սփիւռքը երկիր չէ, պետութիւն չէ, ինչպէ՛ս պիտի ընտրի սփիւռքահայը: Ասենք՝ տրուեց ընտրելու իրաւունքը, ինչպէս կարող ես հաստատել՝ նա հայ է, թէ ոչ, որովհետեւ անձնագրի մէջ գրուած չէ եւ նրա ազգանունն «եան» վերջաւորութիւնն էլ չի կարող ապացուցել նրա հայ լինելը, քանզի այսօր շատ են հայերը, որոնց ազգանունը «եան»-ով չի վերջանում: Իսկ եթէ պիտի նշանակուեն, ապա պէտք է լինեն սփիւռքում իրենց ինքնահաստատումն ապրած, համասփիւռքեան կազմակերպութիւնները, աւանդական կուսակցութիւնները, որոնք երկար տարիների համասփիւռքեան գործունէութիւն են ծաւալել: Թող

լինի նշանակովի մի մարմին, որը սփիւռքի կառուցների ներկայացուցիչներին կազմուած կը լինի:

- Այսինքն՝ առանձին՝ արտախորհրդարանական մարմին:

- Այո, ոչ խորհրդարանի ներսում: Տեսէք, կայացել են սփիւռք-հայրենիք երեք խորհրդաժողով, եւ երեքին էլ ներկայ եմ եղել, եւ դրանցից իւրաքանչիւրին աւելի քան 300-400 մասնակից կար: Այդ ժողովներն աւելի շատ նմանում էին հայրենասիրական ճառերի, քան թէ իրական գործնական հարցերի քննարկման: Այդ 400 հոգու փոխարէն թող լինի ներկայացուցչական մի մարմին՝ 15-20 հոգուց բաղկացած, եւ այս մարմինն արդէն ակտիւ շփումներ եւ հանդիպումներ կարող է ունենալ Հայաստանի, Ղարաբաղի տարբեր կառույցների եւ մարմինների հետ: Սա խորհրդակցական մարմին կը լինի, որտեղ ամեն մէկն իր կարծիքը կ'արտայայտի եւ կը լսի միւսին: Սա աւելի ճիշտ ձեւ է, քան երկպալատ խորհրդարանի ստեղծումը: Այդ խորհրդարանը պէտք է օրէնքներ քուէարկի, այդ օրէնքներն ո՞վ պիտի իրականացնի:

- Այդուամենայնիւ, եթէ այս իշխանութիւնները փոփոխման ենթարկեն Սահմանադրութիւնը եւ Ձեր բարձրացրած մի շարք հարցերը ստանաւ իրենց օրէնսդրական կարգաւորումը, ինչքանով է ընդունելի այն հանգամանքը, որ Յայաստանի քաղաքացիների համար օրէնքներ ընդունեն մարդիկ, ովքեր այլ երկրի քաղաքացիներ են, ապրում են այլ երկրում:

- Ես դեմ եմ դրան, Հայաստանում գործող օրէնքները պէտք է քուէարկուեն եւ ընդունուեն Հայաստանի խորհրդարանում, որի անդամները պէտք է ընտրուած լինեն Հայաստանի բնակչութեան կողմից: Ինչքան էլ որ հայրենասէր լինեն, ազգային պատկանելութիւնը թոյլ չի տալիս Հայաստանում գործող օրէնքները փոփոխելու իրաւունք ունենալ: Ես այդ գաղափարին դեմ եմ, ամէն մի երկրի օրէնքը պէտք է որոշի այդ երկրում ապրող ժողովուրդը:

- Երկպալատ խորհրդարան ստեղծելու գաղափարը ինչ-որ առումով ասոցացում է երկքաղաքա-

ցիութեան օրէնքի հետ: Երբ այս օրէնքն ընդունում էր, կային շատ կարծիքներ, թէ սա արոււմ է սփիւռքահայերին սիրաշահելու եւ աւելի շատ գումարներ Յայաստան բերելու համար: Պարոն Գերեջեան, չէ՞ք կարծում, որ այս անգամ էլ է նոյն իրավիճակը:

- Ես երկքաղաքացիութեան օրէնքին դեմ էի եւ մինչեւ այսօր այդ մասին հրապարակային արտայայտում եմ: Ես համաձայն եմ, որ Հայաստանի իշխանութիւնները կարող են իրենց քաղաքացուն թոյլ տալ լինել նաեւ մէկ այլ երկրի քաղաքացի, սակայն ազգութեամբ հայ մէկ այլ երկրի քաղաքացին, որը Հայաստանի երեսն անգամ չի տեսել, Հայաստանի տեղը չգիտի, անընդունելի է, որ դառնայ Հայաստանի քաղաքացի:

Իհարկէ սիրաշահել հնարաւոր է, եւ այդ սիրաշահելու տակ կարող են քաղաքական նպատակներ թաքնուած լինել: Այս ձեւերով սփիւռքին սիրաշահել չի լինի, որովհետեւ սփիւռքահայը արդէն կապ ունի Հայաստանի հետ, յաճախ է գալիս եւ շփում ժողովրդի հետ, նրանց 95 տոկոսը Հայաստանի երկպալատ խորհրդարանով ո՛չ մտահոգուած է, ո՛չ էլ այդ դարդն ունի, սփիւռքի հոգը չէ՛ քանի պալատ է Հայաստանի խորհրդարանը:

- Պարոն Գերեջեան, Դուք կապ տեսնո՞ւմ էք երկաստիճան խորհրդարան ստեղծելու գաղափարի եւ առաջիկայ խորհրդարանական ընտրութիւնների միջեւ:

- Ես չեմ կարծում, որ մինչեւ ընտրութիւնները ժամանակը կը բաւականացնի, որպէսզի Սահմանադրութիւնը փոփոխուի եւ խորհրդարանը դառնայ երկպալատ: Այդուամենայնիւ, եթէ նոյնիսկ Սահմանադրութեան մէջ փոփոխութիւնները կատարուեն, հնարաւոր է ինչ-որ քաղաքական ուժեր ունենան սփիւռքում պոտենցիալ, կուսակցական ներուժ եւ ցանկանան դա օգտագործել Հայաստանի ներքաղաքական կեանքի մէջ: Բայց նոյնիսկ այդ ուժերի շարքային ներկայացուցիչները չեն էլ մտածել Հայաստանի խորհրդարանի պալատների քանակի մասին:

Անժիլա Խաչատրեան

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91107
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Յետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

Authorized Agent
Blue Shield of California
An Independent Member of the Blue Shield Association

A.B.A. INSURANCE SERVICES

SERVING SINCE 1975

BEDROS S. MARONIAN

(818) 500-9585
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐՔԵՔ ՈՒՅ ԶԷ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ԶԵՐ ԱՊԱԹՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ԹՈՒՆՈՒԶ, ԵԳԻՊՏՈՍ, ՅԱՅԱՍՏԱՆ

ՅԱՐՈՒԹՅՆԻ ԴԱԻԻԹԵԱՆ

Շատ բնական էր, որ Թունուզի եւ Եգիպտոսի ժողովրդային ըմբոստութիւնները քննարկման նիւթ դառնային Հայաստանի թէ Սփիւռքի տարածքին, վերաբանալով 2008 Մարտ 1ի արիւնոտ ու տակաւին անդաման էջը: Շատ բնական էր նաեւ, որ իշխանամէտ եւ ընդդիմադիր շրջանակները իրենց իւրաքայտուկ մեկնաբանութիւնները ունենային ատոնց կապակցութեամբ: Այս յօդուածով մենք պիտի չանդրադառնանք որեւէ կողմի յառաջ քաշած պատճառաբանութիւններուն, այլ պիտի մատնանշենք մի քանի գլխաւոր ազդակներ, որոնք շարժառիթ կը հանդիսանան այդպիսի ըմբոստութեանց ծագման եւ ծաւալման: Միաժամանակ պիտի փորձենք բացայայտել կարգ մը գուզահեռներ այս երեք շարժումներուն միջեւ:

Ժողովուրդ

Ամէնէն գլխաւոր ազդակը ժողովուրդի ազդակն է: Որքան մեծ ըլլայ իշխանութեանց հանդէպ ժողովուրդի անվստահութիւնը, այնքան մեծ է անոր ցասումը: Երբ ժողովուրդի ցասումը կը հասնի այնպիսի աստիճանի, ուր ամէն վախ յաղթահարած ան ստուարութիւ կը նետուի հրապարակ, այդ շարժումը կը դառնայ անկասելի: Որքան մեծ ըլլայ ժողովուրդի ցասումը, այնքան անկասելի կը դառնայ անոր յառաջիկայը: Թունուզի եւ Եգիպտոսի ժողովուրդներուն տասնամեակներու վրայ երկարող ցասումը այդ կը վկայէ: Թունուզ յաջողեցաւ: Եգիպտոսի ժողովուրդին մինչեւ այսօր ցոյց տուած վճռակամութիւնը այդ վստահութիւնը կը ներշնչէ: Իշխանական խուլիկաններուն գլուխ չխոնարհեցնող ու վիրակապերով փաթթուած ըլլալով հանդերձ հրապարակը չլքող Եգիպտացիներու օրինակները, շատ բան կը թելադրեն երկրի իշխանութեանց: Հայաստան ձախողեցաւ, որովհետեւ ըմբոստութիւնը, արդար ըլլալով հանդերձ, ստուարութիւ չեղաւ:

Բանակ

Ազգային պետական գերադաս շահերու նախանձախնդիր բանակը մեծ դեր ունի որեւէ պետութեան գերիշխանութեան ամրակայման եւ յարատեւման մէջ:

Իսկ հատուածական շահեր հետապնդող բանակը վտանգալից բեռ է պետութեան, երկրին ու ժողովուրդին: Թունուզի բանակը փաստեց այդ: Եգիպտոսի բանակը առայժմ ճիշտ դիրք բռնած է ու այդպէս ալ պէտք է շարունակէ, որպէս զի ժողովրդավարութիւնը յաղթանակէ: Անոր սայթաքումը աղիտաբեր պիտի ըլլայ Եգիպտոսի պետականութեան, ժողովուրդին ու ապագային: Հայաստանի բանակի օլիկարխ ու գործարար գեներալները ծանր բեռ (liability), պատուհաս ու խոչնդոտ են երկրի ու ժողովրդավարութեան յառաջ-խաղացման:

Մամուլ

Թունիսեան եւ Եգիպտական ըմբոստութեանց ծաւալման մէջ բացայայտ է մամուլի, հեռատեսիլի, համացանցի եւ նորօրեայ հաղորդակցական միջոցներու (Facebook, You Tube, etc.) խաղացած կարեւոր դերը: Եգիպտական ըմբոստութեան հրահրիչ կայծը, անհատի մը (Խալէտ Սալիտ) կայքէջէն

բորբոքեցաւ: Եգիպտոսի իշխանութեանց պարտադրած ժամանակաւոր արգելքները հակառակ արդիւնքը տուին, ի տէս տեղացի թէ օտար լրագրողներու խիզախ կեցուածքին, ստիպելով գանոնք յետս կոչելու այդ արգելքները: 2002էն ի վեր Ա1+ի փակումը եւ ազատ հեռուստաթերի անհանդուրժողականութիւնը կը փաստեն Հայաստանի իշխանութեանց վախն ու մտահոգութիւնը այս մասին: Սակայն բացայայտ ճշմարտութիւն է, որ ազատ խօսքի վրայ դրուած արգելքը, կ'արգելակէ նաեւ երկրին յառաջիկայը:

Դուրսի Ուժեր

Պրոլետարիայի կարգերը իրանահայ բանուորութեան եւ գիւղացիութեան մէջ խանդավառութիւն էին առաջացրել ի մասնաւորի Գաւառներից Թեհրան գաղթած ընտանիքների մէջ, որոնք տակաւին ապրում էին գոյապրուստի փնտրտուքի մէջ: Շատ-շատերը աշխատանքի եւ բնակարանի դժուարութիւններ ունէին՝ վարձուորներ էին, նրանք իրենց առօրեայ ապրուստը ապահովելու համար ընդգրկուած էին գանազան ծառայութեանց մէջ: Նրանք լսել էին, որ Հայաստանում ձրի բնակարան են յանձնում, աշխատանք դասաւորում եւ երեխաներին պարտադիր ուսման են տանում, նրանց մօտ համոզմունք էր դարձել, որ արդար ու երջանիկ կեանքը գտնուած է կոմինիստական աշխարհում, ուր բոլորը հաւասար մակարդակով ազատ կեանք են ապրում: Սակայն առաւելաբար հայրենիքի սէրն ու կարօտն էր, որ Նրանց տանում էր դէպի հայրենիք, աստանդական կեանքից ձեռքազատուելու եւ տեւական կայք հաստատելու հայրենի հողի վրայ:

Մեզ ծանօթ Անդրանիկն էլ մէկն էր, որ հետամուտ էր հայրենադարձութեան աշխատանքներին: Նա Սուլթանաբադ գաւառից 1950-ական թուականներին ծնողի, երեք եղբոր ու երկու քրոջ հետ փոխադրուել էին Թեհրան եւ հաստատուել էին Վահիդէ թաղամասում վարձու բնակարանում, ութը շունչ միասին մէկ բնակարանում ապրելով: Նրանք իրենց ունեցած հաշմը, բնակարանը, արտերն ու պարտեզը՝ չորս հարիւր տարիների պայսեակեան փոխն ի փոխ ժառանգութիւն-հարստութիւնը պարսիկ գիւղացիներին աժան գնով վաճառած, իրենց կապը գիւղից կտրած դարձել էին քաղաքային գիւղական սովորութիւններով, ժամանակը անվարան ընտելացնելու էր նրանց քաղաքային կեանքի ապրելակերպին:

Այն օրերին Անդրանիկը տասնեօթ տարեկան էր, տան մեծ գաւառը, բոլոր տնեցիների յուսը դրուած էր նրա վրայ: Պէտք էր որեւէ գնով

աշխատանքի անցնել ընտանիքի գոյութիւնը պահպանելու համար: Անդրանիկը գիւղական վարժարանի կրթութիւն ունէր, տնեցիները նրա ուսման սեւ ու սպիտակը ճանաչած լինելով բաւարար նկատեցին եւ իրեն մղեցին որեւէ արհեստ սովորելու: Այն օրերի մեր գիւղացի ընտանիքների շատ-շատերի մտայնութիւնը այս էր, տեսողութեան հորիզոնը սահմանափակ, երբ էին քաղաք տեսել, երբ էին իմանում ուրիշ երկրներում ինչ է անցնում ու դառնում, երբ էին իմանում բարձրագոյն ուսման արժէքը, միայն իրենց մտքի մէջ մտել էր, որ իրենց գաւառը մի արհեստ սովորի իր ապագայ կեանքը տնօրինելու համար: Մօտիկ ծանօթներից Մանաւազը, որ կօշկակարի արհեստանոց ունէր, նրան որպէս աշկերտ ընդունում է իր մօտ: Անդրանիկի ամենափոքր եղբայրը՝ Գարեգինը, երկու քույրերի՝ Սաթենիկի եւ Արեգնազանի հետ միասին ընդունուեցին որպէս դպրոցական աշակերտ «Նախիրի» հայոց ազգային դպրոցում, իսկ միւս երկու եղբայրները՝ Բաբգէնը եւ Վազգէնը նոյնպէս արհեստ սովորելու դիմեցին, Բաբգէնը՝ տեխնիկ մեքենաշինութեան, իսկ Վազգէնը՝ երկաթագործի:

Անդրանիկը գոհ եւ ուրախ էր գործից, նա իր ուշիմութեան եւ աշխատասիրութեան շնորհիւ կարճ ժամանակում դառնում է կանացի եւ տղամարդու վարպետ կօշկակար շահելով տիրոջ՝ Մանաւազի, համակրանքը եւ վստահութիւնը, նա լայն իրաւունքներ է ստանում խանութը կառավարելու եւ յաճախորդների հետ կապուելու համար: Այդ ժամանակներում կօշկակարութիւնը յարգի արհեստ էր նկատուում, երիտասարդները քաշում էին դէպի այդ արհեստը, քանի որ պահանջարկը լաւ էր եւ եկամուտը գոհացուցիչ: Այն տարիներին դեռ կօշկակարութիւնը՝ կօշիկ կապելը, մեքենայացուած չէր եւ կատարոււմ էր ձեռքով:

Անդրանիկն իր շրջապատում ծանօթանում է հայրենասէր գործիչների հետ եւ նրանց հետ յարաբերուում, դասախօսութիւնների եւ ժողովների մասնակցում, մշակութային եւ կազմակերպչական գործերում օգտակար մէկն է դառնում:

Նա իր համեստ ու ընկերասէր բնավորութեամբ յաջողում է իր համատարիք արհեստակիցներից, որոնք տարբեր գաւառներից էին, մի խմբակ կազմել: Նրանք թւով հինգ ընկերներ էին՝ Արսէնը, Հայկը, Արամայիսը, Արմէնը եւ ինքը:

Անդրանիկն իր խմբակի ընկերներին որոշ ժողովներին, հանդիպումներին մասնակից էր դարձնում, նրանց մտքերը գարգացնելու նպատակով ընթերցանութեան համար գրքեր էր առաջարկում եւ քաջալերում էր հայերէն ու պարսկերէն գրքեր եւ թերթեր կարդալ: Հինգ հայեր, հինգ սրտակից-

ներ, հինգ գաղափարակիցներ: Հինգ տարբեր թաղերից իրար շուրջ հաւաքուած հայեր: Հինգ երիտասարդ հայեր սրտերը հայրենիքի համար թրպտացողներ:

Նրանք առնուազն շաքարը մէկ անգամ իրար շուրջ էին հաւաքուած խօսելով երկրի քաղաքական դաշտի եւ հայկական կեանքը յուզող խնդիրների շուրջ:

Այդ տարիներին հայրենադարձութիւնը համայնքի կարեւոր հարցերից էր, գրեթէ իւրաքանչիւր հայ տնում խօսուում էր դրա մասին:

Ահա այդ ուղղութեամբ աշխատանքներ էր տարուում:

Այդ փոքրիկ խմբակի ուղեղն ու ղեկավարը Անդրանիկն էր, որին ընկերները կոչում էին՝ «խմբի ուղեղ»-ը:

Տղեբ'ք, հինգաբարձի գիշերը պատրաստուէք առաւօտը վաղ գնանք սար, էնտեղ կարեւոր բան ունեմ ասելու:

Ով էր որ սիրով չընդունէր եւ համաձայն չլինէր:

Մայիսեան ուրբաթ օր, ոչ աշխատանքի օր, դեռ արփին իր կենսատու հրազունդը ցոյց չտուած, առաւօտուայ լուսնումութիւն հինգ ընկերներ, իւրաքանչիւրը ուսապարկը թիկուներին, Շմրանի սարն ի վեր գագաթն են բարձրանում: Լեւնազնացութիւնը անձանօթ մարզանք էր նրանց համար, Շմրանի սարը նախապէս բարձրացել եւ ծանօթ էին նրան:

Շմրանի սարը ամբողջութեամբ եզերում է Թեհրանի հիւսիսը, նա հենց Ալլեօրգեան լեռնաշղթան է, որի նշանաւոր գագաթն է Դամաւանդը իր 5865 մետր բարձրութեամբ, նրա գագաթներից են նաեւ Թռչալը, Փալանգ Չայը, Սփիլի-Քամարը, Շերլինը, Քուլաք չայը եւ այլն: Լեւնաշղթան նմանում է ուղտերի շարանի, որոնք մետաքսի ճամփով արեւելքից արեւմուտք են գնում բեռնաւորուած:

Լեւնաշղթան հարուստ է աղբիւրներով եւ հոտող վարար գետերով, որոնք գոյանում են ձմռան սառնամանիքին առատ ձիւնի տեղանքից խմելու ջուր եւ ելեկտրականութիւն հայթայթելով հսկայ Թեհրանի եւ շրջանների բնակչութեան համար:

Հինգ ղօշաղ (կտրիճ) երիտասարդներ տաքուկ հազնուած, սպորտները ոտքներին, ձեռնափայտը ձեռքներին, համազարի քայլերով, իրենց առջեւը ունենալով Անդրանիկին քայլում են արահետներով սարն ի վեր: Դեռ արեւը մնում էր էն շատ հեռուները, ոչ ցոլքն էր երեւում եւ ոչ էլ գլուխը, միայն գնալով երկնակամարը կաթնագոյն էր դառնում:

Գարնանային եղանակ էր, սա-

Շաք.ք էջ 19

833 W. Glencloaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065


Dr. Missak Ekmekdjian
Chiropractor

Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Քայրափոքացիք բժշկում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յոզային եւ սկզնային ցտեք:
Խոքայանքի վնասի եւ երեխանցով պատահած վնասուածքներու բժշկում:
Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ՍԱՐԳԻՍ ՆԱԾԱՐԵԱՆԻ «ԴԵՄ ԱՌ ԴԵՄ» ԶԵՐՈՍԱՊԱՏՈՒՄ

Հերոսապատոււմ կոչեցինք 376 էջերու վրայ տարածուող այս հատորը, որովհետեւ վաստակաւոր ու նուիրեալ հրատարակագիր Սարգիս Նաճարեանի գրեթէ կէսդարեայ աշխատանքին պտուղներուն մէկ փոքր ծաւալին մէջ կը կարդանք հեղինակին 47 տեսակցութիւններուն մասին, որոնց մէջ կան ութ հոգեւորականներ, տասնհինգ պետական դէմքեր, դիւանագէտներ, տասը քաղաքապետներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ, տասը գրողներ, արուեստագէտներ, երկու հնագէտ եւ ելեւմտագէտ ու մէկ անձնանօթ հերոսի մը պատուամը:



Լրագրողներու Դաշնակցութեան, Հայաստանի ժուռնալիստներու Միութեան եւ Լրագրողներու Միջազգային Դաշնակցութեան անդամ է:

Հեղինակը արդարօրէն իր սիրալի այս գործը նուիրած է իր հօր՝ դեղագործ՝ Միհրան Նաճարեանի անմոռանալի յիշատակին:

Ու հիմա, որ պտուղը իր ծառէն հեռու է ինկած՝ հայր եւ որդի հրատարակագիր, խօսինք Սարգիս Որդի Միհրան Նաճարեանի այս սիրագործութեան մասին, որուն խորագիրը՝ «ԴԵՄ ԱՌ ԴԵՄ»:

Յիրաւի այս 47 տեսակցութիւնները գրի առնուած են դէմ առ դէմ Պէյրութի, Անթիլիասի, Հալէպի, Լիոնի, Հոռոմի, Երեւանի, Օթթաուայի, Ծաղկաձորի, Դամասկոսի մէջ: Անշուշտ մեծ մասը Պէյրութի մէջ:

Անմոռանալի: Բայց այսօր ո՞վ կը յիշէ հրատարակիչ եւ խմբագիրը «Աղբիւր» պարբերաթերթի (1913, Հալէպ), «Ժպիտ» պարբերաթերթի (1927, Պէյրութ), «Լիբանանի Գրպանի Տարեցոյց»-ի (1933, Պէյրութ), «Սահակ Մետոյ» ամսաթերթի (1927-1937, Պէյրութ), պատասխանատու խմբագիրը «Լիբանան» թերթի (1924-1934, Պէյրութ) եւ «Արարատ» օրաթերթի (1956-1960, Պէյրութ): Ո՞վ կը յիշէ: Բայց այս նուիրեալ հնչակեանը, ինչպէս անվարան կը յիշէ հեղինակը, եղած է իր զաւակին մայրենի լեզուի առաջին ուսուցիչը եւ զինք լրագրութեան առաջնորդը:

Կէս դարու պատմութեան մը առջեւ կը գտնուինք:

Այլազան մարդիկ բազմազան նիւթերու շուրջ կը խօսին այստեղ եւ երբ հարցադրողը փորձառու հրատարակագիր մըն է, նիւթերը կը ներկայացուին ամբողջական անկեղծութեամբ:

Խօսինք օրինակներով, տալէ ետք գիրքին յառաջաբանը գրող ու «գիրը կը մնայ» խորագիրը կրող Անդրանիկ Մ. Վրդ. Կոստեանի խօսքէն հատուած մը. «Բազմահարիւր էջերով այս տրոփուն հատորին կեդրոնական նիւթն է հայը, ո՛ր ալ գրտնուի, Սփիւռք, Հայաստան, Լիբանան, իր հարցերով, իր հոգերով եւ իր անաւարտ երազներով: Հեղինակին լեզուն՝ խիտ ու սահուն է, ոճը՝ կուռ ու սեղմ, դատողութիւնը՝ անսպառ, գրիչը՝ աշխոյժ»:

Այս բոլորը մի քանի տարի առաջ իմացած էի հեղինակէն իր Պէյրութի տանը մէջ: Աւելին ալ իմացած էի՝ որ Միհրան Նաճարեանը ըլլալով կուսակցական, իր ոչ կուսակցական որդիին «Ժառանգ» ձգած է «Արարատ» օրաթերթը, իր կուսակցութեան օրաթերթը, իր որդուն՝ Սարգիս Նաճարեանին, պահանջելու պէս խնդրելով անկէ, որ ծառայէ «Արարատ» օրաթերթին:

Ու Սարգիս Նաճարեան, նուիրեալ հրատարակագիրը, տասնամեակներով յարգեց իր խոստումը, հօրը տուած իր խոստումը ու բազմահարիւր յօդուածներ ստորագրեց կամ անստորագիր յայտնուեցաւ «Արարատ» օրաթերթի էջերէն ու մերթ խմբագրեց ալ այս թերթը:

Ես կը շեշտեմ հեղինակին անաչառութիւնը, լրիւ անկողմնակալ ըլլալը, ուր կը տեսնենք հայուն եւ օտարին դիմանկարը այնպէս, ինչպէս որ է: Թող ընթերցողը մեկնաբանէ:

«Արարատ»-ի խմբագրատան մէջ յաճախ հանդիպած եմ Սարգիս Նաճարեանին, երբ փոքր ուստիօ մը գրկած օրուան լուրերը կը նօթագրէր, թերթին թարմ լուրեր հասցնելու մտահոգութեամբ:

Հերոսութիւն չէ՞ հայ մամուլին նուիրուիլ տասնամեակներով: Ճշդե՞նք՝ ամբողջ 44 տարի (1960-2004):

Գիրքին փոխան յառաջաբանի բաժինին մէջ, Նաճարեանը «Այս գիրքը՝ ինչն ու» էջին վրայ կը գրէ. «Մամուլը հանրային կարծիքը կազմաւորող ամպլոնն է իրաւամբ: ...Ես ջանացած եմ հարցադրոյցներու ճամբով մամուլը դարձնել նաեւ անկախ եւ ինքնուրոյն հանրային կարծիքը արձագանգող ազատ ամպլոն»:

Սարգիս Նաճարեան հրատարակագիրը խմբագրած է նաեւ «Այգ» օրաթերթի լրատուական բաժինը (1965-1971), եղած է պատասխանատու խմբագիրը Զմմառու Հայ Կաթողիկէ Ընծայարանի «Կանչ Հրեշտակապետին» պարբերաթերթի ու պատասխանատու տնօրէնն ու խմբագիրը Հայ Կաթողիկէ Պատրի արքութեան «Մասիս» քաղաքական ամսաթերթի:


Այդպէս ալ, այս գիրքը կէս դարու վկայարան մըն է հեղինակին ապրած տարիները բնորոշող:

Կեանք մը ամբողջ ծառայութիւն հայ լրագրութեան: Զխօսինք իր ստացած շքանշաններուն մասին երբ այսօր համատարած դարձած են նման տուգնութիւններ: Բայց որ 12 Յուլիս 2000 թուին ստացած է «Փրոֆեսորի գիտական կոչում» Հայաստանի Հիւսիսային Համալսարանէն, կարճամտապարհացալ ու կ'աւելցնենք, որ այս հեղինակը Լիբանանի խմբագիրներու Սենտիքայի, Արաք

ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսը կը գրէ. «Միայն միասնակամութեամբ կայ հայոց փրկութիւն»: Ու կ'աւելցնէ. «Միշտ, Կաթողիկոս ընտրուելէս առաջ իսկ, կարեւորութեամբ շեշտած եմ Հայաստանին եւ Ղարաբաղի հզօրացման գործնական մասնակցութեան կենսական անհրաժեշտութիւնը»:

Ամենապատիւ Ներսէս Պետրոս ԺԹ. Կաթողիկոս Պատրիարքը կաթողիկէ Հայոց ի Լիբանան՝ շեփորած է. «Սփիւռքի առաջնահերթ հիմնախնդիրը՝ միաբանութիւնն է»: Ու աւելցուցած. «Մենք համոզուած ենք որ հայ դպրոցը հայապահպանութեան զլխաւոր հիմնասիւններէն մէկն է»:

Հալէպի (1991 թ.) կաթողիկէ հայոց առաջնորդ՝ Պետրոս Արքեպս. Միրիաթեանը իր խօսքը ուղղելով Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ ըսած է. «Մեզ կրնաք նկատել որպէս աջակից եւ ոչ՝ մրցակից»: Հոս, խօսք կայ նաեւ այն մասին, որ սրբազան հայրը նախագահ Լեւոն Տէր Պետրոսեանին



յանձնած է անոր մկրտութեան վկայագիրը: Նախագահ Տէր Պետրոսեան ըսած է. «Ճիշդ է, որ ծնողքս եւ կնքահայրս միշտ ինձի կը յիշեցնեն, որ ես ծնած եմ Հալէպ ու մկրտուած եմ, սակայն ես բան չեմ յիշեր Հալէպէն, որովհետեւ հագիւ մէկ տարեկան էի երբ ներգաղթեցի Երեւան»:

Պաթագեան սրբազան կը բացատրէ կաթողիկէ հայոց Սիւնհոդոսին ինչ ըլլալը ու կ'աւելցնէ. «Մեր Սիւնհոդոսը... առաջադրեց կապ հաստատել Հայ Առաքելական եկեղեցոյ երկու նուիրապետական Աթոռներուն եւ հայրենի ղեկավարներուն հետ համագործակցութեան լաւագոյն կերպը ճշդելու եւ որդեգրելու համար»:

Իսկ Նորվան եպս. (այժմ Արքեպս.) Զաքարեանը Լիոնի տեսակցութեան ժամանակ յայտարարած է. «Հայապահպանութեան համար՝ լեզուին նման սքանչելի գործիք չկայ... Լեզուն է միջոցը պատմութեան հուղթեան թափանցելու»:

Իսկ Վեր. դոկտ. Փօլ Հայտոսեանը, նախագահը Պէյրութի Հայկազեան Համալսարանի, յայտարարած է. «Մենք Հայկազեանը կը սեպենք հայկական աստղ մը՝ ոչ հայկական մեր շրջապատին մէջ»:

Քոյր Արմինէ Մակարոսեանը կը խօսի Անարատ Յղութեան հայ քոյրերու միաբանութեան մասին, որուն հիմնադրութեան 150-ամեակը կը տօնուէր այդ օրերուն: Քոյր Արմինէ Մակարոսեանը ըսած է. «Հայ քոյրը՝ 150 տարի է ի վեր

նուիրուած է ազգի զաւակներու կրօնական եւ ազգային դաստիարակութեան»:

Բոլոր կրօնաւորները, անխըտիր, այս էջերուն վրայ բազմաբնոյթ ազգային նիւթեր շօշափելով ըսած են կարեւոր ու վճռական բարի խօսքեր:

Հեղինակը ամբողջ գիրքի տարածքին 47 տեսակցութիւններէն իւրաքանչիւրին նախորդող սիւնակին վրայ ենթակակաները ներկայացնող իր խօսքը ունի: Բան մը, որ պայծառացուցած է մատուցուած նիւթը:

Կը յաջորդեն պետական դէմքերն ու դիւանագէտները:

Հոս խօսք ունի Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի նախագահ՝ Վարդգէս Համազասպեանը, որ կ'ըսէ. «Մեր գործունէութիւնը պէտք է պարփակէ ամբողջ սփիւռքը»:

Թէեւ կապեր ունինք 960 կազմակերպութիւններու եւ 5000 անհատներու հետ, սակայն ասոնք ամբողջ սփիւռքը չեն ներկայացնել: Կան լայն տեղեկութիւններ Կոմիտէի աշխատանքներուն շուրջ:

Ամիս Ռէյմոն Էտտէն յայտարարած է Հայաստան մեկնելով. «Երախտապարտ եմք հայերուն»:

Մենք հայերս միշտ երախտագիտութիւն յայտնած ենք ու կը յայտնենք արաբներուն, բայց ահա արաբ մը նաեւ ու պետական, քաղաքական դէմք, կ'ըսէ թէ Լիբանանն ալ երախտապարտ է հայերուն: Այստեղ լայն տեղեկութիւններ կը տրուին Հայաստանի մասին եւ մեծաշարք հիւրին տպաւորութեանց շուրջ:

1991 թ. հայ օրերու վարչապետ՝ Վազգէն Մանուկեանը կը թեւադրէ. «Պէտք է օգտուինք հանգամանքներից եւ ոչ թէ ծառայենք ուրիշների շահերին»:

Կարգալ պէտք է այս գիրքը՝ ծառին ետեւի անտառը տեսնելու համար: Լիբանանի խորդարանի այժմու նախագահ Նեպիհ Պըրրին եւս այցելած է Հայաստան ու ըսած. «Լիբանան համաձայն է, որ Ղարաբաղի մէջ տեղի ուննայ ինքնորոշման իրաւունքի հանրաքուէ»:

Խօսք ունի նաեւ Հոռոմի մօտ ՀՀ հաւատարմատար դոկտ. Գաբիկ Պաղտասարեանը, որ ըսած է. «Սփիւռքը նախ միախմբուելու է, որպէսզի կարենայ դառնալ կազմակերպուած ուժ»: Ու աւելցուցած. «Տնտեսական շահերը այսօր շատ մեծ դեր ունին քաղաքականութեան մէջ: Բարոյականը ընդհանրապէս դեր չունի դժբախտաբար»:

1998-ի Մայիսի 10-ին Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ՝ Խոսրով Յարութիւնեանը ըսած է. «Այնքան ատեն որ թուրքերը չեն ճանչցած Հայոց Յեղապանութիւնը, այդ մեղքին բեռը պիտի փոխանցեն սերունդէ սերունդ...»:

Ան աւելցուցած է, թէ այս մեծագոյն ոճիրը միայն հայութեան նկատմամբ չէր, այլ ոճիր էր ամբողջ մարդկութեան նկատմամբ:

Գանատալի Հայաստանի հաւատարմատար Վալերի Մկրտումեանը եւս ունի իր խօսքը. «Դեսպանութիւնը համահայկական կառույց է եւ կախելով չի կրնար ըլլալ որեւէ կազմակերպութիւնէ եւ ոչ ալ գտնուիլ որեւէ շրջանակի

**ՍԱՐԳԻՍ ՆԱՃԱՐԵԱՆԻ «ԴԵՍ ԱՌ ԴԵՍ»
ԴԵՐՈՍԱՊԱՏՈՒՄԸ**

Շարունակում էք 14-էն

ազդեցութեան տակ»:

Իսկ Լիբանանի մօտ Հայաստանի դեսպան Արեգ Յովհաննիսյանը կ'ըսէ որ «Հայաստան կարիքն ունի հօգոր, կազմակերպուած եւ միասնական Սփիւռքի՝ սերտորէն կապուած հայրենիքին հետ»:

Լիբանանի պետական նախարար Ժան Օղասապեանը կը յայտարարէ. «Լիբանանի մէջ հայերը կղզիացած համայնք մը չեն»:

Նախկին նախարար եւ երեսփոխան՝ մեթր ժագ Չուխատարեանին խօսքը. «Հայաստանէն դուրս, Լիբանան լաւագոյն օճախն է հայութեան համար»:

Ըստ Ամենայն Հայոց կաթողիկոսի հարկի խօսքեր կան, ինչպէս դեսպան՝ Վահան Տէր Ղեւոնդեանին սա միտքը. «Հայաստանի համար Սփիւռքին հետ համագործը մեծապէս կը հեշտանայ, եթէ ափիւռքը ներկայանայ իբրեւ մէկ ամբողջութիւն»:

Այս մասին երազելը օգուտ մը ունի, երբ գործի չէ վերածուած եւ արդէն ո՛ւր է, շատ ո՛ւր:

Լիբանանի մէջ պետական երեսփոխաններ Եղիկ Ճէրճեանն ու Յակոբ Բագրատունին կը շեշտեն. «Լիբանանահայերը իրաւահաւասար քաղաքացիներն են Լիբանանին»:

Իսկ Սփիւռքի նախարար Հրանտ Յակոբեանը ըսած է. «Մենք չենք պատրաստուած սփիւռքը կառավարել, այլ պատրաստուած ենք Սփիւռքի հետ գործակցել...»:

Վրաստանի նախագահ Սահակաշվիլի խորհրդակցութիւնն Վան Բայրութեանը ըսած է. «Հայաստանը շատ հաւասարակշռուած քաղաքականութիւն է տանում...»:

Իսկ Սուրիոյ մէջ Հայաստանի դեսպան՝ Դոկտ. Արշակ Փոլատեանը ըսած է. «Իբրեւ դեսպանութիւններ՝ մենք մեր թիկունքում գգում ենք մեր գաղութին շնչառութիւնը»:

Հեղինակը հոս տուած է դեսպանին լայն կենսագրականը:

Հասած ենք քաղաքապետներ, քաղաքապետական եւ հասարակական գործիչներ բաժինին Հոս խօսք ունի Պէյրութի ինքնաշարժներու շրջաօղակութեան գրասենեակի պետ՝ Անդրանիկ Սինանեանը, որ ըսած է. «Պէտք է դաստիարակել քաղաքացիները»:

Հեղինակը իր խօսքը ունի Պէյրութ-Երեւան օդանաւային գիծին բացումը կատարող մեր օդանաւորներուն հետ: Համակ ուրախութիւն՝ այս բաժինը:

710 նոր բնակարաններու տուելութեան մասին կը խօսի Պուրճ Համուտի քաղաքապետ Յակոբ Աշճեանը ու կը յայտնէ իր կարծիքը թիւրօ-Սանճագի ճակատագիրին շուրջ (26 Նոյեմբեր 1970):

Իրագործելի պայծառ ծրագիրներ ունի ան:

Տոքթ. Սելիմ Հայէք կ'ըսէ. «Հայաստան դարձած է աշխարհի ամէնէն յառաջադէմ երկիրներէն մէկը» (24 Նոյեմբեր 1971):

Տոքթ. Հայէք Սին էլ Գլիլի շրջանի ազդեցիկ անձնակերպութիւններէն մէկն է:

Սփիւռքի Կոմիտէի նախագահ Ա. տեղակալ՝ Մարտիրոս Մելքոնեանը ըսած է. «Մեր նպատակն է սատարել ազգապահպանման»:

Աստղիկ Գեորգեանը հարց կու տայ. «Ի՞նչ մարմին ստեղծել որպէսզի համակարգի Հայաստան-Սփիւռք համագործակցութիւնը»: Իրեն համար «Յատուկ մտահոգութեան նիւթ է արտահոսքը, հեռանում են մշակույթի գործիչները, գիտնականները եւ ամենակարեւորը, ամենավտանգաւորը՝ երիտասարդութիւնը»:

Հոս ներկայութիւն է Քաթապի կուսակցութեան ղեկավարներէն մեթր Անթուան Շատէր, ծագումով հայ, որ ըսած է. «Քաթապները միշտ առաջնակարգ դեր մը ունեցած են լիբանանեան քաղաքական բեմին վրայ»: Ան ըսած է նաեւ, որ «հայերը ամէն բանէ վեր՝ կը պահանջեն որ հրէական ողջակիզումին եւ աշխարհի մէջ տեղի ունեցած բոլոր ցեղասպանություններուն նման, Հայոց Յեղափոխութիւնը ճանաչում գտնէ համայն աշխարհին եւ մասնաւորապէս թուրք ժողովուրդին ու պետութեան կողմէ: Ապագա Պողոս, մայրենին չզիտարող հայ կաթողիկէն, կ'ուզէ որ իր նմանները սորվին հայերէն: Ան կը հաւատայ է. «Երկխոսութիւնը ժողովուրդներու քաղաքակրթութեան եւ զարգացման մակարդակի ցուցանիշն է»:

Պուրճ Համուտը, որ հայաքաղաք մըն է Պէյրութի կից, տրւած է իր անցելով, ներկայով ու ապագայով: Հոն կ'ապրին 150,000 հոգի (2007 թ.), մեծամասնութեամբ հայեր: Քաղաքապետն ու փոխքաղաքապետը հայեր՝ Անդրանիկ Մարթեան եւ Ռաֆֆի Կեօյօղլյանեան, որոնք կ'ըսեն. «Պուրճ Համուտը հինէն մեզի ժառանգ ձգուած է: Ջոյն լաւ ձեւով, իր հայկական պիտակով մեր յաջորդներուն փոխանցելու պարտաւորութիւնը մեր ճիտին պարտքն է: ...Պուրճ Համուտը գանձ մըն է»:

Իսկ Սանճագ քեմփին (որ հիւղաւան մըն էր) անունը կը կապուի հայոց վերջին գաղթին երբ ֆրանսացիք «ասպետօրէն» իսկէնտէրունի շրջանը թուրքիոյ յանձնեցին 1938 թուին, «շուրջ 46,000 հայեր 1939 Յուլիս 16-23-ին մէկ շաբթուան մէջ, իրենց ետին ձգելով տուն ու տեղ, տեղափոխուեցան... Հայէպ, Քեսապ, Պէյրութ եւ Այնճար, խուսափելու համար օսմանեան բռնատիրութեան լուծէն ու նոր կոտորածէ մը»:

Ու այս հայերով բնակուած նախկին գիւղատիպ այս քեմփը շուտով, 2012-ին կը դառնայ քաղաքատիպ շրջան «Պէյրութի նաւահանգիստէն Տորա երկարող մայրուղիին վրայ», ծանօթ ճարտարագէտ Վազգէն Չէքիճեանի փլանաւորումով: Վերակոչուելով «Սէն Ժագ Փլագա»: Հայուն շինարար ձեռքը հոս եկած է ծաղկեցնելու համար այս երկիրը»:

Գրողներ, Արուեստագէտներ բաժին:

Պուրճ Համուտն ու Սանճագի քեմփը մեզի ծանօթացնել է արաբ պետական շարք մը մարդոց տեսակէտները ընթերցողին փոխանցել է տք հայոց ու Հայաստանի մասին, ահա Սարգիս Նաճարեան վարպետ գրոյցագիրը կը սկսի ներկայացնել գրողներ ու արուեստագէտներ, սկսելով սիրուած երգչուհի Արփինէ Փէնչլիվանեանով, զոր հայաստանեան մեր տան մէջ եւս ունեցանք, քանի Արփինէն դասընկերուհին էր կիտոյս՝ Արմինէին եւ անոր համետ հայրը՝

Նշան Քէօմիւրճեան իմ ֆրանսերէն լեզուի ուսուցիչս էր Հայէպի Կիւլպէնկեան վարժարանին մէջ:

Արփինէն հանդէս եկաւ Անուշի դերով (1956 թ.) ու գնահատու եցաւ բոլորէն:

Խօսք ունի նաեւ Լիբանանի Ազգ. Երաժշտանոցի նուագախումբի ղեկավար՝ Ռաֆֆ Ապիլլաման. «Մեր նպատակն է տեղացի տարրերով, հոգ չէ թէ շատ դանդաղօրէն, ամուր հիմերու վրայ դնել մեր ապագայ մեծ նուագախումբը: (Հոս) հայ աշակերտները կը կազմեն մեծամասնութիւն: Ուսուցչական անձնակազմին մէջ եւս բազմաթիւ հայեր կան (եւ) հայկական երաժշտութիւնը՝ արեւելեան ոճ ունենալով յատկապէս, կը հրապուրէ զիս»: Այս սակաւ խօսքին մէջ տարողունակ գործ կայ:

Ապա տեսակցութիւն մը Մարտիրոս Սարեան վարպետին հետ, որ կ'ըսէ. «Շատ մարդիկ կու գան ու կ'երթան, բայց որպէս մեքենամարդ երթալ պալը անիմաստ է»: Նաեւ՝ «Լաւ է օտար լեզուներ գիտնալը, բայց նախ պէտք է իմանալ մայրենին, լա՛ւ իմանալ: Առանց մայրենի լեզուի իմացութեան, ո՞նց կրնանք իրար հասկնալ ու իրար սիրել, ըլլալ հայրենասէր: Մեր լեզուն՝ մեր ամէն ինչն է...»: Տակաւին, «Հողը մի կենդանի էակ է. ան ունի իր հոգին եւ առանց հարազատ հողի, իր հայրենիքի հետ սերտ կապի, հնարաւոր չէ գտնել իրեն, իր հոգին...»:

Որպէս պատգամ կը հնչեն վարպետին գոհար խօսքերը:

Հայոց պատմութիւնը խօսիլ կու տայ պատմական վարդան Պարսամեանը, որ կ'ըսէ. մեր պատմութեան ընթացքին քիչ սխալներ չենք գործած: Ահա Ուիլիամ Սարոյեանը. «Հայաստան մեր յոյան է, բայց պատիկ է սահմաններով, Տարօն, Պիթլիս, Սասուն, այս բոլորը մենք պիտի ունենանք: Սակայն, ամերիկացիները բարեկամութիւն ըրին թուրքերուն հետ եւ թուրքերը չտուին...»:

Սարոյեանը խանդավառուած է Հայաստանով ու լաւ տպաւորուած Պուրճ Համուտէն:

Կիւլպէնկ Կիրակոսեանը եւս արդարօրէն տեղ գրաւած է այս էջերուն վրայ: Ենթական ինքնուսարուեստագէտ էր եւ մեր Այբուբենը 50 տեսակ զարդարած:

Ժամանակին մենք անձնապէս յանձն առինք հրատարակել իր իրապէս շնորհաւորելի գործերուն ալպոմը, բայց մարդիկ մէջ մտան ու խանգարեցին մեր ծրագիրը:

Կը տեսնէ՞ք նիւթերու զանազանութիւնը Սարգիս Նաճարեանի այս գործին մէջ:

Ահա եւ դաշնակահար Համիւեանները, սերունդէ սերունդ երգարուեստի վարպետները, ինչպէս սերունդէ սերունդ Պայեանները ճարտարապետութեան մէջ ի Պոլիս:

Էմմիեանները Լիբանանի Քասիլիքի երաժշտանոցին մէջ մեծ դեր ունեցան:

Հապա Ռոպերթ էմիլիանեանը, որ ՄԵԶԱՄ-ի երգի

փառատունին մէջ, որ տեղի ունեցաւ 6000 ամէնազգի երաժշտասէրներու ներկայութեան եւ որուն պատկերասփիւռի միջոցաւ հետեւեցան 100 միլիոն մարդիկ եւ ուր Ամիրխանեան մրցանակի արժանացաւ իր «Երգն ալ ունի հոգի» ստեղծագործութեամբ:

Ամիրխանեանը Սարգիս Նաճարեանին ուղղեալ 27 Դեկտեմբեր 1991-ի նամակին մէջ կը գրէ. «Երդուել եմ անմնացորդ ծառայել հայ մշակույթի վերելքի սրբազան նպատակին»:

Իսկ Շամիրամ Սեւակը, հեղինակին ըսած է. «Հայրս ապաստանած է իմ մէջ եւ կը խօսի ինծի հետ»:

Գիրքին հեղինակը այսպէս կը ներկայացնէ Շամիրամ Սեւակը, որ երբ թուրքերը դէպի մահ առաջնորդեցին անոր հայրը՝ Ռուբէն Սեւակը, Շամիրամ Սեւակը ինը ամսու էր. «Երեւոյթով՝ եւրոպացի է, հպատակութեամբ ֆրանսացի, լեզուով՝ ֆրանսախօս, ապրումով՝ հայ, դուստրը Ռուբէն Սեւակի»:

Այս էջերուն մէջ մուտք գործած է նաեւ Թորոս Թորանեանը, որ 2 Օգոստոս 2009-ին գիրքի հեղինակին ըսած է. «Սփիւռք բառը խարտոց կը նշանակէ»:

Ահա հնագէտ եւ ելեւմտագէտ մը բաժինը գիրքին, ուր ներկայացուած են Արմենակ Փոլատեանն ու Ալէն Պալեանը, երկուքն ալ Լիբանանէն:

Առաջինին բարեկամութիւնը վայելած եմ: Ան մեծապէս օժանդակած է հայկական գանձատուններու՝ բազմաթիւ հնութիւններ, յատկապէս հիմնադրամներ նուիրելով Հայաստանի եւ վենետիկի ու Պէյրութի հայկական թանգարաններուն:

Իսկ Ալէն Պալեան, փոխկառավարիչը Լիբանանի կեդրոնական դրամատան, յայտարարած է. «Պատասխանատուները պէտք է տեսիլք ունենան եւ իւրացնեն զայն»: Ան կը յայտնէ նաեւ որ Լիբանանի կեդրոնական դրամատան պահեստը ունի 13 միլիառ տոլար, որով կրնայ առաջը առնել չարահաւանութիւններու: Ելեւմտագէտը կը յայտնէ նաեւ թէ արտերկրի լիբանանցիները եօթը միլիառ տոլարի փոխանցում մը կը կատարեն լիբանանեան դրամատուներուն միջոցաւ:

Անձանօթ հերոսի մը պատուը բաժինով կը փակուի այս խիստ հետաքրքրական եւ ուսանելի հատորը, ուր կը ներկայացուի իրաւ հերոս մը՝ Արամ Միրզոյեան, որ ոտքով, կուռելով, Երեւանէն հասած է Պերլինի Ռայխստակը՝ փորձելով մեծագոյն հերոսութիւններ:

Իր այս գործով Սարգիս որդի Միհրանի Նաճարեանը հարուստ ժառանգութիւն մը կը կտակէ հայութեան վեր առնելով կէս դարու հայ ու ոչ հայ կեանքը սփիւռքի ու յատկապէս Լիբանանի մէջ:

Մեծակշիւ իրագործում, գոր կը շնորհաւորենք ու հեղինակին ու իր հարազատներուն կ'ըսենք. Ջօրանա՛ք:

Շնորհաւոր Նոր Տարի:

ArmenienInfo.net
News. Informationen. Kommentare.

ԿՐԻԱՅԻՆ ԴԱՍԸ

ՀԱՅԿ ՆԱԳԳԱՇՅԱՆ

Եթե մի պահ ապրած տարիներում շատ նիւթեր քաղած եմ գրականութեան վերածելու համար: Ափրիկեան բնութիւնը, կենդանական աշխարհը եւ ամբողջական մարդը՝ իր նախնական ու բնական կենցաղով, ցախով ու ցեխով շինուած իր հիւղակով, բազմապէս ու բազմակրօն իր փողովուրդով, աւանդութիւններով ու նախապաշարունակներով: Նիւթեր՝ որոնք նորութիւն էին հայ գրականութեան համար: Բայց այդ բոլորին մէջ մոռցած, կամ անտեսած եմ կրիայի մը ինծի տուած դասը, որ կեանքիս այս հանգրուանին ինծի շատ պիտանի եւ օգտակար եղաւ:

Օրհասական կռիւի մը յաղթական եղած հակայական կրիա մըն էր՝ շուրջ մէկ մեթր երկայնքով եւ քիչ մը նուազ լայնքով: Պարտեալը, նոյն չափով զանգուած մը, կռնակին վրայ պառկած, ոտքերն ու գլուխը աջ ու ահեակը դարձնելով կռուան կը փնտռէր չորս ոտքերուն վրայ կենայտ համար: Ընկերս ու ես հագիւ կրցանք գրահասպատ այդ զանգուածը վերցնելով տեղաւորել մօտակայ թփուտի մը մէջ, ախոյեանին աչքէն հեռու, որ կեցած տեղէն մեր շարժումներուն կը հետեւէր: Երբ մօտեցայ իրեն, գլուխը պատեանէն ներս քաշելով շարունակեց անշարժ կենալ: Վրան ելայ կրիայի մը շալակին վրայ պտոյտ մը ընելու չարածճի փափաքով, բայց ան մերժեց քալել: Շատ էր արդեօք շուրջ ութսուն քիլօ ծանրութիւն մը պտոյցները: Պահ մը այդպէս անշարժ մնաց, գուցէ հինգ վայրկեան, բայց յետոյ համոզուելով որ այդ ծանրութենէն պիտի չկարենայ

ձերբազատուիլ, սկսաւ յամբարձն յառաջանալ: Կենդանական բնագոյրը զինք հաշտուելու մղեր էր կացութեան մը հետ, որուն վրայ ինք հակակշիռ չունէր: Ինծի հիացում պատճառեց կացութեան հետ հաշտուելու կենդանական այս բնագոյրը, որմէ յաճախ զուրկ են մարդիկ: Ես իջնելով վրայէն ազատ թողուցի որ շարունակէ իր կեանքի ուղին, առանց յաւելուածական հոգ ու ծանրութիւն կրելու:

Հիմա, կեանքիս այս հանգրուանին, ես ալ չեմ կենար անհոգ ու առանց յաւելուածական ծանրութիւն կրելու շարունակել կեանքիս ուղին: Ես, իբրեւ բանաւոր կենդանի, չեմ կրնար ինքզինքիս համար ալ ընել այն, ինչ որ ըրի կրիային համար: Ժամանակը չէ՞ որ ձերբազատուիմ ազգային, ընկերային, կուսակցական եւ այլ պարտականութիւններէ, որոնք շալկեր եմ մինչեւ երէկ, բայց մտահոգութիւնը մինչեւ այսօր: Եւ գրականը, որուն բեռը կրեմ եմ վաթսուամեակէ մը ի վեր՝ բազմաթիւ գիրքերու մէջ բաժնելով գայն: Այժմ, գիրս հագիւ ես եւ փորձառու խմբագիրները կրնանք կարգալ, իսկ գրածներս, թէեւ պարզ հայերէնով գրուած են, բայց կրնան նոյնիսկ անհաճոյ ըլլալ ոմանց: Ուրեմն, պէտք է նաեւ դարձիմ գրելէ՞: Իմ բոլոր բախումներս, պայքարս մղուած են՝ երբեմն յաղթական ու երբեմն պարտեալ ելքով, բայց առանց անձատուութեան, միշտ ինծի վերապահելով ազատ մտածումի եւ խօսքի իրաւունքս:

Հետեւաբար, լաւագոյնն է թօթափել յոգնաբեկ շալակիս վրայ դեռ ծանրացող այդ բեռները եւ հետեւիլ կրիային օրինակին, երկար ու դանդաղ երթով դէպի...

Դէպի կեանքի մշտանորոգ նպատակ:

ԱՐՇԱԿ ՏԻԳՐԱՆԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆԻ 30-ԱՄԵԱՅ ՅՈՐԵԼԵԱՆԸ ԱՊՐԻԼ 2, 2011

Այս տարին յիշարժան է դառնում Թէքէեան Մշակութային Միութեան Արշակ Տիգրանեան վարժարանի 30-ամեայ տարեդարձով: Այս արժանաչիշատակ առիթը ողջ տարուայ ընթացքում տօնուել է մի շարք շահերտական միջոցառումներով եւ ամփոփուելու է "Տաղլեան Մշակութային Կենտրոնի" հանդիսաւոր սրահում, Շաբաթ օրը՝ 2011 թուականի Ապրիլի 2-ին կայանալիք վարժարանի 30-ամեայ յոբելեանին նուիրուած շքեղ ճաշկերոյթով:

Միջոցառումը կը կայանայ հովանաւորութեամբ Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տէր Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի: Ներկայ է լինելու նաեւ պրն Հմայեակ Բալթայեանը, որպէս վարժարանի հովանաւոր եւ ճաշկերոյթի պարուաւոր հիւր:

Միջոցառման նշանակալից պահը կը լինի Արշակ Տիգրանեան վարժարանի երեսուն յաջողակ տարիների պատմութեանը նուիրուած տեսաերկի ցուցադրումը: Այն կը ներկայացնի վարժարանի լուսաւոր ճանապարհը, որը սկսուեց 1981 թուականի աշնանը եւ աստիճանաբար վերածուեց նախամանկապարտէզից մինչեւ 12-րդ դասարանն ընդգրկող կրթական հաստատութիւն, որը տուեց իր առաջին հունցքը 1990 թուականին: Այսօր վարժարանը հպարտանում է իր հարիւրաւոր շրջանաւարտներով,

ովքեր վարժարանից յետոյ կրթութիւնը շարունակել են բարձրագոյն հաստատութիւններում՝ դառնալով յաջողակ

Որպէս աւանդութիւն, միջոցառումը ղեկավարուել է Մոնոպոլսուցչական Յանձնախումբի անձնակազմի կողմից, ուստի այս տարուայ միջոցառման պատմական կարեւորութիւնը մղել է կազմակերպչներին ընդգրկել ծնողա-ուսուցչական անձնակազմի նախկին անդամներին՝ աւելի ուշագրաւ դարձնելու միջոցառումը: Նաեւ ծրագրուած տպագրել միջոցառմանը նուիրուած յուշագրքոյկ:

Արշակ Տիգրանեան վարժարանի 30-ամեայ տարեդարձը մի առիթ է, որը չի կարելի բաց թողնել: Հովանաւորները, ընկերները, ծնողները եւ շրջան-աւարտները, որոնք ունեցել են իրենց աքթիւ մասնակցութիւնը Արշակ Տիգրանեան վարժարանի արժանավայել հեղինակութեան ձեւաւորման գործում, ներառեալ նրանց, որոնք վերագրել են հայկական դպրոցին մեր ապագայ առաջնորդների պատրաստումը, խրախուսուած են մասնակցելու այս ճաշկերոյթին:

Յաւելեալ տեղեկութիւնների եւ նախապատուէրների համար գանգահարել վարժարանի գրասենեակ, Տիկ. Անգինէ Զարիբեանին՝ նշուած հեռախօսահամարով (323) 461-4377 կամ՝ Արմէն Մխսեանին (323) 791-5239:

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ
Երուանդ Պապայեանի
 ՍԻՐՈՒԱՄ ԴԷՄՔԵՐ, ԳԻՐՔԵՐ, ԻՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԵՒ ԱՅԼՆ Ստանալու համար դիմել՝
 Կլեմտէյի «Ապրիլ» եւ «Պերմ» Գրատուները

AMERICAN RELIABLE WINDOWS



Beautify while increasing the value of your home with elegant,

18 months no interest* Financing O.A.C

ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.

Vinyl, Wood, Fiberglass, Glad or Aluminum Replacement, Retro or New Construction

Our Windows Qualify For Tax Credits

Manufacturers rebates & deep discounts available NOW.
 Product, Pricing and Financing to meet any Budget.

888-804-7250
 Your Satisfaction is Guaranteed.



Licensed • Certified • Insured CSLB LIC#901591

www.americanreliablewindows.com

\$89 Rebate*
toward the price of new Vinyl Windows

Rebate Example:
 5 windows = *445
 10 windows = *890
 15 windows = *1335



Serving Los Angeles, Ventura, Orange, & San Bernardino Counties

ԱՐԴԵՕՔ ԿԱՐԵԼԻ՞ Է ԵՐԵՒԱՆԵՐՈՒ ՈՒՂԵՂԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԶԱՐԳԱՑՆԵԼ

Հաւանաբար չեն պատկերացներ, թէ ամէնօրեայ սովորութիւններովդ կրնաս շատ դիւրին ու պարզ ձեւերով, երեխային ուղեղին աշխատանքը զարգացնել:

Երեխային ուղեղը ծնած ատեն իր մէջ կը պարունակէ 100 միլիարդ (billion) նիւրոններ: Ան իր կեանքի առաջին տարիներու ընթացքին եռիլիոնով ուղեղային բջիջներու կապեր պիտի հաստատէ, որոնք կը կոչուին neural synapses:

Ուղեղի հիւստեանքներուն եւ աշխատանքին գաղտնիքը գաջն գբաղ պահելու մէջ կը կայանայ: Այն synapse-ները որոնք կապուած չեն իրար հետ եւ միասնաբար ածած ու զարգացած չեն, նախադպրոցական տարիներուն կը կորսուին:

Հոս հարկ է նաեւ շեշտել թէ երեխաներուն ուղեղները աւելի շատ այս կապերով հարուստ են քան չափահասներունը: Այսպէս կը բացատրուի անոնց լեզու սորվելու կարողութիւնը:

Երբ ձեր երեխային սէր եւ գուրգուրանք կը ցուցաբերէք, ինչպէս նաեւ անոր հետ խօսելով կը բացատրէք ձեր պահանջներն ու գորովը, ինքնաբերաբար կը նպաստէք այդ կապերու սերտացման եւ ուռճացման, որոնց կարեւորութիւնը անբացատրելի է այս իմաստով: Այսպէս, շուտով ան պիտի սորվի լեզու, իմաստութիւն եւ ծրագրաւորում:

Ուրեմն ի՞նչ ընենք, կամ ի՞նչ բաներով զբաղեցնենք մեր երեխան:

1. Նախքան ծնունդը, առողջութեամբ մտահոգուեցէք: Յղութեան շրջանին առողջ մնացէք եւ վանեցէք բոլոր յոռի սովորութիւնները, որոնք կը վնասեն ձեր երեխային ուղեղին, իր սաղմնային վիճակին մէջ: Փաստուած է թէ ծխող մայրերուն զաւակները ընթերցանութեան տկարութիւն կ'ունենան: Իսկ անոնք, որոնք թմրեցուցի կ'օգտագործեն յղութեան միջոցին, անոնց երեխաները սորվելու ըմբռնելու տկարութիւն կ'ունենան, ինչպէս նաեւ անբացատրելի ու յանկարծակի յարձակողական դիրքորոշումներ:

2. Իմաստալից խօսակցութեան անհրաժեշտութիւնը, ձեր երեխային հետ խօսած միջոցին միայն ձայներ եւ ճիշդ մի արձակէք, այլ յստակ եւ ձայնի բարձր թոնով հաստատումներ կատարեցէք:

3. Խաղերու ժամանակ ձեռքերը օգտագործեցէք: Փոքրիկները աւելի շուտ կ'ըմբռնեն այն խաղերն ու շարժումները, ուր ձեռքերը նաեւ մաս կը կազմեն այդ խաղին:

4. Մասնակից դարձէք անոր մատնացոյց ըրածներուն եւ հետաքրքրութիւններուն: Երբեք մի անտեսէք անոր ցոյց տուածները, այլ ընդհակառակը ձեր կարգին նաեւ իր ուշադրութեան առարկան ձեր ուշադրութեան եւս յանձնեցէք ու զբաղեցէք անով:

5. Գիրքերու ծանօթացուցէք շատ կանուխ: Գունաւոր եւ պատկերազարդ գիրքերու օգնութեամբ գանազան ձայներ լսել տուէք ձեր երեխային, կենդանական աշխարհին ծանօթացնելով: Հիմնականը

սկզբնական տարիներուն հասկացողութեան լեզուն զարգացնելն է, եւ ապա խօսելու լեզուն կը զարգանայ: Երեխան սկիզբը պիտի հասկնայ մեր ըսածները եւ ապա խօսելու փորձեր պիտի ընէ:

6. Շոյեցէք ու խօսեցէք անոր հետ: Փաստուած է թէ այն երեխաները, որոնք աւելի նուազ շոյուած ու փայփայուած են անոնց ուղեղները աւելի փոքր են իրենց տարեկիցներու ուղեղներէն: Երեխաներու մաքրութեան ժամանակը օգտագործեցէք զգացական վերելքի ածին համար: Մանուաւոր նկատի առէք, որ այդ միջոցին շատ մօտ կ'ըլլաք ձեր փոքրիկին եւ անոր աչքերը ձեր վրան յառած կը մնան ու ամբողջ ուշադրութիւնն ու կեդրոնացումը ձեր վրան կ'ըլլայ:

7. Սերտուած ու ուղեղային աշխատանքը զարգացնող խաղեր ընտրեցէք: Խաղեր որոնք պատճառ եւ արդիւնք ըմբռնումը կը զարգացնեն: Փոքր խորանարդ մը մեծին վրայ դնելով երեխան կը սկսի գիտելիքներու միացման եւ ուղեղային այդ կապերու հաստատման:

Երեխաներու դաստիարակութիւնը ամէնօրեայ եւ յաճախակի աշխատանքի կը կարօտի, եւ ո՛չ մէկ ծնողք կը սպառի կամ կը հրաժարի այդ աշխատանքէն: Ուրեմն միշտ փորձելով եւ առանց հիասթափուելու կ'առաջարկենք հետեւեալը.

1. Երեխայի լացին ու պահանջներուն տրամաբանական եւ ճիշդ ձեւով պատասխանեցէք: Հանդարտեցնելով, շոյելով, հասկցնելով եւ իրեն հետ մասնակից դառնալով՝ կրնաք դրական շրջանառութիւն զարգացնել երեխայի ուղեղին զգացական բաժինին մէջ: Ամենօրեայ սէր անոր մէջ կ'արթնցնեն զգացական ապահովութեան շատ կարեւոր յատկանիշ:

2. Ձեր երեխային վստահութիւնը շահեցէք ուշադիր հետեւելով անոր եւ լսելով զինք: Այն երեխան, որ զգացականօրէն կապուած է իր մօր, աւելի հանգիստ եւ ուրախ կ'ըլլայ, ինչպէս նաեւ կարողութիւնը կ'ունենայ աւելի եռանդներ դնելու իր հետազօտութեանց, եւ յայտնաբերումներուն նկատմամբ:

3. Մարձուծին բարիքները, յաճախ շոյեցէք ու սիրեցէք ձեր երեխան: Մարձուծը կը նուազեցնէ երեխային ճնշուածութիւնը, եւ զգացական ապահովութեան զգացում կը ներշնչէ անոր: Միտոյ հպումները կը մեծցնեն երեխան: Հետազօտութիւնները ցոյց տուած են, թէ ժամանակէն առաջ ծնած երեխաները, որոնք օրական մօտաւորապէս երեք անգամ մարձուծի ենթարկուած են, աւելի շուտ դուրս կու գան հիւանդանոցէն, քան այդ երեխաները, որոնք չեն վայելած այդ «հաճոյք»ը:

4. Օգնութիւն պահանջեցէք ձեր երեխային՝ մաքրութեան եւ դասաւորումի գործերու ժամանակ: Այս մէկը մեծապէս կը նպաստէ կազմակերպման աշխատանքներու զարգացման:

Խաղալիքները հաւաքած միջոցին պէտք է սորվեցնել, թէ իւրաքանչիւրը իր տեղը ունի, նմանօրինակ տեսականի կողքին:

Շարելու ժամանակ՝ մեծէն պատիկ, կամ հակառակը: Այս ձեւով ուղեղին մէջ դասաւորելու եւ կարգի բերելու վարժութիւնը կը զարգանայ:

5. Ապահով միջավայր մը պատրաստեցէք: Ձեր սողացող երեխան կամ նոյնիսկ նախադպրոցականը պեղելու աշխատանքի մասնագէտ կրնայ ըլլալ: Տակը, վրան, միջեւ եւ այսպէս բոլոր վայրերը իրեն համար մատչելի կրնան ըլլալ: Լաւ է ապահով դարձնել այս միջավայրը, քան թէ ամէն բանէ զրկել կամ արգելք հանդիսանալ՝ ամէն ինչի դպչած պահուն «մի՛ ըներ» պոռակով: Երեխան պիտի պեղէ, որպէսզի սորվի:

6. Յաճախ երգեցէք ձեր երեխային: Երգով թէ՛ լսողութիւնը, շարժումները եւ գէթ կշռոյթի ըմբռնումը կը զարգանայ երեխային մօտ:

7. Երեխային վիճակը եւ վերաբերումը ըմբռնեցէք: Եթէ ամէն կողմ է ձեր զաւակը, անոր ուժը եւ ինքնավստահութիւնը զօրացուցէք՝ իր վերաբերմունքին հետ հաշտ վիճակ մշակելով: Եթէ չափազանց կայտառ է, ապա օգնեցէք իրեն, որ առանց վնասելու կամ վնասուելու իր ամբողջ ջերմեռանդը օգտագործէ շինիչ բաներու կամ սորվելու եւ իմանալու համար:

8. Ուտելու ժամանակը հաճելի պահու վերածեցէք: Բարձրաձայն յայտարարեցէք անոր կերածին անունը: Երբ ժամանակը հասնի առանձին ուտելու, թոյլ տուէք, որ այդպէս պատահի որքան ալ աղտոտէ շուրջը, համբերատար մօտեցէք ու վարժեցուցէք: Այս ձեւով երեխային մօտ կը զարգանայ ուտելիքի եւ ուտելու ժամուն հանդէպ դրական կեցուածք: Մինչ եթէ պատերազմով ու սպառնալիքներ

րով փորձէք կերակրել գաջն, պիտի ձախողիք:

9. Ձեր երեխային արարքներու համար յստակ պատասխաններ ու կեցուածքներ ճշդեցէք, եւ հետեւողականութիւնը պահեցէք անպայման:

10. Դրական ձեւով օրէնք եւ կարգ-կանոն հաստատեցէք ձեր տան մէջ: Յստակ շարունակականութիւն եւ հետեւողականութեան արդիւնք ցուցաբերեցէք դաստիարակութեան ընթացքին, այսինքն, չսարսափեցնէք կամ ամօթալի վիճակի մէջ չդնէք զինք եթէ ան անընդունելի արարք մը կատարեց. օրինակ՝ եթէ ուրիշ երեխայի մը զարկաւ, հանդարտութեամբ իջէք երեխային աչքերուն մակարդակին, ու շատ լուրջ եւ ցած ձայնով հասկցուցէք, թէ ըրածը անընդունելի է, եւ շեշտեցէք օրէնքը, թէ՛ չըլլար երեխայի գարնէ:

Օրէնքները, գորս կը յայտարարէք ձեր երեխաներուն, թող ըլլան պարզ, տրամաբանական եւ հետեւողական, ու անոնց տարիքին եւ ուղեղին համար հասկնալի: Ապակի ծաղկամանը, որ տեղադրուած է փոքր սեղանիկի մը վրայ, տրամաբանական չէ երեխային համար, ուստի աւելի լաւ է որ այդ ծաղկամանը վերցնէք մէջտեղէն:

11. Զգացումներ յայտնել, եթէ նկատէք, որ ձեր շրջապատէն ներս մէկը նեղուած ու անտրամադիր է, կրնաք բացատրել ձեր զաւակին, թէ այդ անձը նեղուած է եւ թէ կրնաք մխիթարել գաջն՝ դրական զգացումներ յայտնելով անոր: Այս ձեւով, ուղեղային բջիջներու կապերը կրնաք ամրապնդել ձեր երեխային մօտ եւ զգացական վերելք ապահովել անոր:

Սուրբ Փրկիչ Ամսաթիւնը Հայոց Հիւանդանոցի-Պոլիս

FOR THE SAKE OF THE PAST...
FOR THE SAKE OF THE FUTURE...

Protest - Բողոք

Համաբարձ
Հիշելով
Անձգապիտ

REMEMBER
SUMGAI

SUNDAY FEBRUARY 27 10:00AM
Azerbaijani Consulate, Los Angeles

For Info visit: www.YoungArmenians.com
or call 8 18 97 1.5065

ՔՈՒԷԱՐԿԵՆՔ՝ ՀԱՅ ԱԶԳԻ ՀԱՐԱԶԱՏ ԶԱԲԱԿ ՔՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆԻՆ

Շարունակում է 1-ին

մայնի հիմնական պահանջ-կարիքներում: Այդ պահանջ-կարիքներն ունին մասնաւորաբար առողջապահական, բարեսիրական, ուսումնական, մարզական կառոյցները:

Անոնց շարքին կը գտնուի տագնապի վերածուած քմրամուլութեան աղէտալի վիճակին մատնուած, ու երեսի վրայ թողուած պատանի-երիտասարդութեամբ զբաղուելու հրամայականը: Թմրամուլութիւնը կը փնցանէ մեր նոր սերունդներն ու անոնց ապագան:

Պրն. Շահինեան կը պատմէ, թէ առիթներով այցելած է պատահական դարմանատներ, ուր հանդիպած է մեծ թիւով պատանի-երիտասարդ քմրամուլներու: Զրոյցի պահուն, երբ Պրն. Շահինեան հարց տուած է քմրամուլ պատանի մը, թէ «ու՞ր են ինձի ծանօթու ընկերները», պատանին պատասխանած է, «անոնցմէ ես մնացի, որ ողջ եմ»: Մեր խօսակիցը ցաւով անդրադարձաւ այն մասին, թէ պէտք է մօտէն զբաղուիլ այս հարցով:

Փաստիւնալոյսաբանութեամբ, անշուշտ, կ'ստանայ միւրական մեծ նպաստներ, որոնք կը յատկացուին պետական կառոյցներու կողմէ: Անոնցմէ եկած օժանդակութիւններէն կ'օգտուին յատկապէս այն համայնքներ, որոնք, իրենց բաղադրարարներ խորհուրդի անդամ ներկայացուցիչներուն միջոցաւ հետեւողականօրէն կը հետապնդեն անոնց ձեռքբերումը: Այդ որոշակի նիւթական յատկացումները կը նպաստաւորուին անոնք, որոնք, բաղադրարար տարածաշրջանէն ներսունին եւ կամ կը ծրագրեն ունենալ իրենց կրթական, առողջապահական, մարզական-երիտասարդական, բարեսիրական եւ այլ մարդասիրական կեդրոններ, որոնք ընկերային ծառայութիւններ կը մատուցեն իրենց համայնքներէն ներս: Իր համայնքին ծառայելու

խոր գիտակցութեամբ եւ պատաստակամութեամբ ընտրական ասպարէզ կը նետուի մեր երիտասարդ թեկնածուն:

Այո՛, Փաստիւնալոյսաբանութեամբ խորհուրդի ընտրութիւններուն իր պատկանելի թեկնածութիւնը կը բերէ սիրուած, յարգուած շնորհալի երիտասարդ Գրիս Շահինեան, որ ծանօթ է մեր համայնքին իր հասարակական անաչառ ծառայասիրութեամբ, ազգասիրութեամբ եւ հայրենասիրութեամբ: Մեր համայնքին կարիքները ծանօթ են իրեն՝ սկսելով մարզարան մը չունենալու տխուր իրողութենէն, հասնելով պատանի-երիտասարդը ուրախ եւ զբաղ պահող շարժումներուն եւ վերջապէս հանգրուանելով մինչեւ քմրամուլութենէն բուժման կարելիութիւններուն: Շահինեանի ծրագիրը փրկել է հայ պատանին զինքն օգնելու, ստրկացնող միջավայրէն, կարելի միջոցներով օգնել մեր համայնքի գործընկերներին:

Մեր կոչն է Փաստիւնալոյսաբանութեամբ ընտրաշրջանին արձանագրուած մեր հայ բաղադրարարներուն, ազգովին, հաւաքաբար եւ միասնական՝ մեր մասնակցութիւնը բերել այս ընտրութիւններուն եւ փութարկել ժողովրդանուէր թեկնածու՝ Գրիս Շահինեանին: Պէտք է մոռնալ, որ ներկայացուած միակ արժանի համար, իրարու դէմ պիտի պայքարին ձէմ ման, Ռամիլ Բերբէկեան եւ իրեն հայ թեկնածու՝ Գրիս Շահինեան: Այս հաշուով, խնդրոյ առարկայ մէկ արժանի համար կայ մէկ հայ եւ չորս ո՛չ հայ թեկնածուներ:

Կրկին անգամ, մեր կոչն է, որ Երեւանի 3 Մարտ 2011-ին, խորհուրդի շարքերով դիմելու փութարկուին, փութարկելու համար մեր միակ թեկնածուին, յաջողակութեամբ անոր ընտրութիւնը: «Պէտք է ձեռք բերել Փաստիւնալոյսաբանութեամբ խորհուրդի՝ հայ անդամ մը կարենալ ընտրելու այս ոսկի առիթը», կ'ըսէ Գրիս Շահինեանը:

ՅԱԿՈՒ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ ՄՕՏԱԼՈՒՏ ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ԱՌԹԻ

Շարունակում է 8-ին

մէջ ու կ'ըլլայ տեսակ մը ներշնչանքի մղիչ ուժ: «Կենսագրութեանս մէջ յայտնուած 13 տարեկան աղջիկը միշտ եղած է իմ երեւակայութեանս մէջ եւ երբեմն ղեկավարած է էութիւնս», կը խոստովանի ան: Խորապէս հովուերգական պահերու, գոյներու եւ գիծերու ներկայութիւնը զգալի են վարդանեանի գեղանկարչութեան մէջ՝ քիչ մը վերացական ու գերիրապաշտական շղարշի մը ետին:

Յակոբ Վարդանեան կարօտով ու երախտագրութեամբ կը չիլէ կիպրոսի Մեղգոնեան կրթական Հաստատութեան այն տարիները, երբ արուեստի ուսուցիչ Պրն. Սեպուհ Աբգարեան կողմէն է գինք, բաջալերած եւ ուղղութիւն տուած է իր ներքին յուզական հարուստ աշխարհին: «Պրն. Ս. Աբգարեան յոյժ կարեւոր բարերար ազդեցութիւն ունեցած է վրաս անկասկած, ան է որ ինձի տուած է թուղթ ու ներկ, մատիտ ու անձամատիտ...»:

Յաջորդ հանգրուանը Հայաստանն է Յակոբ Վարդանեանի կենսագրութեան մէջ: 1969-1975 ան ճարտարապետութեան մասնագիտութեան կը հետեւի Երեւանի Պոլիտեխնիկական Հաստատութենէն ներս, միաժամանակ շատ մօտէն հետեւելով Երեւանի Գեղարուեստա-թատերական ինստիտուտի ակադեմիականներու դասընթացներուն՝ սերտ կապեր հաստատելով անուանի նկարիչներու հետ, ինչպէս Երուանդ Քոչար, Էլիբեգեան, Մինաս Աւետիսեան եւ ուրիշներ:

Յակոբ Վարդանեան մասնակցած է իմբական երկու կարեւոր ցուցահանդէսներու՝ ուշադրութիւնը գրաւելով արուեստասէր հասարակութեան ու քննադատներու: Այսպէս, ան տակաւին նոր աւար-

տած էր Մեղգոնեան Հաստատութիւնը, երբ 1965ին Պէյրութի մէջ կը մասնակցի Յեղասպանութեան 50-ամեակին նուիրուած ցուցահանդէսին, այնուհետեւ Ֆրանսայի ՀԲԸ Միութեան կազմակերպած յայտնի ցուցահանդէսին Փարիզի մէջ:

Յակոբ Վարդանեան ունի սուր դիտողականութիւն եւ բնութեան խորհրդաւոր գաղտնիքներուն մէջ թափանցելու իւրապատուկ կարողութիւն: Ան նաեւ մտածող եւ իմաստասիրող արուեստագէտ է: Քիւպոստական ու գերիրապաշտական ոճի ստեղծագործութիւններուն մէջ ամէն գիծ, գոյն ու կորութիւն տրամաբանուած են, բայց երաժշտականութիւնը կարելի է նկատել իր պատասաններուն գլխաւոր յատկանիշներէն մէկը:

- Ճարտարապետութիւնն ու երաժշտութիւնը շատ մը աղերսներ ունին, - կ'ըսէ ինք, - երկուքին մէջ ալ կան զօրաւոր կառուցուածք ու տրամաբանութիւն, ենթագիտակիցին մէջ, ապա կու գայ այն պահը, երբ գիտակցութեան կաշկանդումէն դուրս կու գաս ու կը ստեղծագործես ազատօրէն:

Եթէ այսօր շատ ծանօթ անուն մը չէ Յակոբ Վարդանեան, պատճառը իր արուեստի տկարութիւնը չէ, ոչ ալ ամօթխածութիւնը կամ ինքնավստահութեան պակասը: Ան սպասած է տարիներ, մինչեւ որ հասնի այն աստեղային ժամը, այն հասունացման պահը, երբ ինք հանգիստ պէտք է զգար որ հասած է պոռթկալու ժամը:

Արուեստասէր հասարակութեան համար յայտնութիւն մը պիտի ըլլայ Յակոբ Վարդանեանը Փետրուար 25-26ին, այցելեցէք եւ ինքներդ հաստատեցէք այս ճշմարտութիւնը:

Յաջորդութիւն կը մաղթենք մեր սիրելի Յակոբին:

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

PALM SPRINGS ԱՐԶԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 for USA

* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax : -----

Խաչիկ «Քրիս» Շահինեան եղած է Փասադինայի բնակիչ աւելի քան 20 տարիներ: Փոքր գործառքի սեփականատէր է, համայնքի ծանօթ անձնաւորութիւններէն եւ ընտանիքի հայր: Խաչիկ եւ իր կինը՝ Ռիթան, ունին երեք զաւակներ՝ բոլորն ալ յաճախած են Փասադինայի համրային վարժարանները:

Համայնքային ծառայութիւններուն մաս կը կազմեն հետեւեալները.

- 2007էն ի վեր վարչութեան անդամ՝ 4րդ Շրջանի, Փասադինայի Համայնքի Ներթափանցման Միութեան (Pasadena Community Access Corporation):

- Հիմնադիր՝ «Հայ Ինքնութեան Հունձք»ի (Armenian Identity Harvest):

- Համայնքին ծանօթ, 2010ի ԱՄՆ Մարդահամարին օժանդակից:

- AYSOի կամաւոր մարզիչ:

- Put Pasadena First Խաչիկ Շահինեան գորավիզ կը կանգնի փոքր գործառքներու:

- Վարժարաններու Բարձր Որակե Գլխաւոր Նախադասօրհներէն է

- Թմրերու Մաքրութիւն եւ Երօթեկոտեան Կանխարձրութիւն Առաջնաբեր է

Օգտուելով ղեկավարման փորձառութենէն, Շահինեան կը ցանկայ մեր համայնքին մէջ այս կարեւոր նպատակներուն հասնիլ: Կը խնդրուի Փասադինայի մասին ձեր հոգերն ու հարցերը կիսել Խաչիկ Շահինեանի հետ, հեռաձայնելով անոր (626) 399-1799 թիւին, կամ՝ գրել հետեւեալ եմակին (ելեկտրոնային նամակ) chahinianforcitycouncil@gmail.com

Միա՛կ Հայ թնկնածուն, որ կը վայելէ Հայ համայնքին աջակցութիւնը

Քասադինայի Հայ Գաղութայնութեան
Քուէարկեցէք Խաչիկ «Քրիս» Շահինեանին Մարտ 8ին
Չէր քուէն՝ ձեր ձայնն է



Զոյսէն՝ Ստա, Խաչիկ «Քրիս», Լարա, Ռիթա, Սեակ

